

ԱՆՏԻՊ**ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ ԱՆՏԻՊ ԹՂԹԱԾՐԱՐ ՄԸ՝
ՏԻՎՐԻԿԻ ՎԻՃԱԿԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Օսմանեան սահմանադրութեան վերահռչակման (1908) յաջորդած շրջանը հայկական բարենորոգումներու իրագործման տեսակէտէ եղած է աշխոյժ քննարկումներու ժամանակահատուած մը, երբ Հայկական հարցը վերստին յայտնուած էր միջազգային դիւանագիտութեան օրակարգին: Մինչ Օսմանեան կայսրութիւնը պատերազմի մէջ էր պալքանեան ժողովուրդներու հետ (որու արդիւնքին զգալի քանակութեամբ տարածքներ պիտի կորսնցնէր), Ամենայն հայոց Գէորգ Ե կաթողիկոսի յատուկ կոնդակով նոյեմբեր 1912-ին կը ստեղծուի Ազգային պատուիրակութիւնը՝ Պօղոս փաշա Նուպարի գլխաւորութեամբ: Քիչ անց, 21 Դեկտ. 1912-ին Կ. Պոլսոյ Ազգային կեդրոնական վարչութեան կից կը հաստատուի Ապահովութեան յանձնաժողովը: Վերջինս գլխաւոր աջակիցն էր Ազգային պատուիրակութեան, որուն տեղեկութիւն կը մատակարարէր, թելադրութիւններ կ'ընէր, դեսպանատուներու հետ յարաբերութիւն կը մշակէր ու կը գոհացնէր անոնց հարցումներն ու պահանջուած բացատրութիւնները: Այս յանձնաժողովին կ'անդամակցէին Եղիշէ Արք. Դուրեանի, Վահան Թէքէեանի, Գրիգոր Զօհրապի նման անուանի գործիչներ: Ապրիլ-Յուլիս 1912-ին Կ. Պոլսոյ պատրիարք Յովհաննէս Արք. Արշարունիի նախաձեռնութեամբ կատարուած մարդահամարէն ետք (որու արդիւնքները Հայաստանի միացեալ պատուիրակութեան կողմէ աշխարհամարտէն վերջ պիտի ներկայացուէր Փարիզի վեհաժողովին), Ապահովութեան յանձնաժողովի ու պատրիարքարանի նախաձեռնութեամբ 1913-ին նոր մարդահամարի մը սկիզբ կը դրուի [Զաւէն Արքեպս.: 1947, Թաթոյեան: 2015]:

20 Փետր. 1913-ին Կ. Պոլսոյ պատրիարքութեան կողմէ մարդահամար-հարցախոյզի կատարման շրջաբերականներ կ'ուղարկուին թեմակալ առաջնորդներուն: Հարցումները հետեւեալներն էին. անուն ֆաղափ կամ գիւղի, թիւ հայ բնակչութեան, թիւ հայ հոռվմէականաց, թիւ հայ բողոքականաց, ֆանի՞ տուն հայ բնակչութիւն կայ, թիւ քրիստոնէայ այլ բնակչութեան, թիւ թափառաշրջիկ բնակչութեան, թիւ այլակրօն բնակչութեան, թիւ պանդուխտներու (հարցախոյզը կ'ուզէր գիտնալ նաեւ, թէ պանդուխտները ո՞ր երկիրներու մէջ են), արժէ՞ ազգային անշարժ կալուածոց, թիւ եկեղեցեաց, թիւ վանուց, թիւ ազգ. վարժարանաց մանչերու, թիւ ազգ. վարժարանաց աղջկանց, թիւ երկսեռ ուսանողաց, թիւ եկեղեցականաց, որքա՞ն իսլամացած հայ կայ: Կը պահանջուէր, որ մարդահամար-հարցախոյզի արդիւնքներն ու պատասխանները պատրիարքարան ուղարկուին երեք ամսուան ընթացքին [Թաթոյեան: 2015]:

Մարդահամար-հարցախոյզի շրջաբերականը կը հասնի նաեւ Սեբաստիոյ թեմակալ առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեանին (հետագային՝ պատրիարք Ս. Աթոռոյ, 1931-1939), որ իր հերթին զայն պատշաճ պաշտօնագրերով կը յղէ նահանգի սահմաններուն մէջ գտնուող թեմերուն ու վիճակներուն, որոնց շարքին էր Տիվրիկը, որ գտնուելով հանդերձ Սիսի կաթողիկոսութեան ենթակայութեան տակ, ի հարկին կը կատարէր նահանգի վարչական կեդրոնէն հասած յանձնարարականները: Առաջնորդ սրբազանը վիճակագրութեան արդիւնքները պատրիարքարան կը յղէ երկու անշատ

թղթածրարով: Առաջինը կ'ամփոփէր առաջնորդական շրջանի հայոց վիճակագրութիւնը, իսկ երկրորդը կեդրոնական գաւառի (սանճագ) «ազգաբնակչական համացուցակ»: ՀԲԸՄ-ի Փարիզի Նուպարեան գրադարանը ի պահ դրուած, 20 Օգ. 1913 թուակիր նամակով [DOR 3/4], Գուշակեան պատրիարքական տեղապահ Գաբրիէլ Նպս. ձէվահիրճեանը (քանի որ Յովհաննէս Արք. Արշարունի պատրիարքը հրաժարած էր) կը տեղեկացնէր, թէ կեդրոնական գաւառին մաս կը կազմեն երեք առաջնորդութիւններ, որոնցմէ մէկն էր Տիվրիկը, համանուն գաւառակի սահմաններով: Նոյն նամակէն կը տեղեկանանք, որ համացուցակը պատրաստած է ինքը՝ Գուշակեանը, յենով անշուշտ բնակավայրերէ հասած հարցաթերթիկներու պատասխաններուն վրայ (հոն մանրամասն պատմած է համացուցակի պատրաստութեան ընթացքը, ինչ սկզբունքներու հետեւած ըլլալը՝ իրեն դրկուած տեղեկութիւնները խմբագրելու ժամանակ): Հետեւաբար, համացուցակը կազմելէ ու զայն Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարան ուղարկելէ ետք, իւրաքանչիւր գաւառակէ հասած վիճակացոյցներուն բնագրերը խիստ հաւանաբար վար դրած ըլլալու էր: Թորգոմ Նպս. Գուշակեան, որ հետագային պիտի դառնար Ս. Աթոռոյս գահակալը, Սեբաստիոյ թեմակալ առաջնորդի պաշտօնը վարած է մինչեւ 6 Նոյեմբեր 1913 թուականը (26 Դեկտեմբեր 1907-էն սկսեալ): Կ'ենթադրենք դարձեալ, թէ այս փաստաթուղթերը հետը բերած ըլլայ Երուսաղէմ: Հաւանական է դարձեալ, որ իւրաքանչիւր գիւղի վիճակացոյցը կցած ըլլայ համացուցակին եւ այդպէս ուղարկած՝ Կ. Պոլիս, ուրկէ ալ պատրիարքարանի արխիւին հետ եկած-հասած ըլլայ Երուսաղէմ: Մեր այս ենթադրութեան հիմք կու տայ Օտուռ գիւղի վիճակացոյցին առաջին էջին (ամբողջութեամբ հրատարակած ենք ստորեւ) Կ. Պոլսոյ պատրիարքութեան դիւանապետ Գէորգ Բամպուքճեանի կողմէ տպագրուած ըլլալը, Երուանդ Զարդարեանի «Պատմագիրք Տիվրիկ քաղաքի» մէջ: Յամենայնդէպս, այս արժէքաւոր ու պատմական թղթածրարին ինչպէս Երուսաղէմ հասնիլը որոշ չափով կը պահէ իր գաղտնիքը:

Տիվրիկի գաւառակը, բացի համանուն քաղաքէն, ունէր նաեւ գիւղախումբ, ճահիթ, որ կը բաղկանար տասներեք գիւղէ՝ Բալանկա, Սինճան, Խուռնավիլ, Աշուշէն, Կասմա, Բարդամ, Արմութաղ, Ս. Յակոբ, Մրվանայ, Զիմառայ, Կիւրեսին, Օտուռ եւ Բենկա (Բինկեան): Հետեւեալ վիճակացոյցները կը ներկայացնեն բոլոր գիւղերը՝ բացի Բենկայէ, որ հաւանաբար Ակնի գաւառակի վարչական տարածքին մէջ կը համարուէր:

Նկատելով, որ վիճակացոյցները կազմուած են տուեալ գիւղի գրոց-բրոց համարուող անձերուն կողմէ, գաղափար մը տալու համար անոնց լեզուական հմտութիւններուն եւ պատկերացում կազմելու նպատակով ժամանակաշրջանի հայերէնի մակարդակին վրայ, նախընտրած ենք բնագրերը հրատարակութեան յանձնել առանց որեւէ սրբագրումի, այնպէս ինչպէս կարգացած ու վերծանած ենք: Անկիւնաւոր փակագիծերու մէջ դրած ենք մեր կատարած յաւելումները կամ անհրաժեշտ նշումները, իսկ սուր փակագիծերու մէջ՝ բնագրէն պակսող հատուածները:

Հուսկ, որդիական խորին ակնածանքով շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որու արտօնութեամբ եւ զայն հրատարակութեան պատրաստելու յանձնարարութեամբ է որ այս թղթածրարը տրամադրուած էր մեզի՝ Արխիւատան նախկին տնօրէն պր. Արշակ Բանուշեանի ձեռամբ: Շնորհակալութիւն Արխիւատան տեսուչ Գերշ. Տ. Կորին Նպս. Բաղդասարեանի, Փարիզի ՀԲԸՄ Նուպարեան մատենադարանի տնօրէն Պորիս Աճէմեանի, Երեւանի Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Միհրան Մինասեանի, «Յուշամատեան» նախագծի հեղինակ, պատմաբան Վահէ Թաշճեանի, պատմաբան Ռոբերտ Թաթոյեանի, որոնք պատ-

րաստակամօրէն աղբիւրներ տրամադրեցին, խորհուրդներ տուին, իրենց գիտելիքները բաժնեցին՝ անտրտունջ պատասխանելով ուղղած հարցումներու:

ԴՈԿՏ. ՍԵՒԱՆ ԿՍՐԿ. ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

Մատենագիտութիւն

- «Պատմագիրք-Յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառի հայութեան», հտ. Ա, կազմեց՝ Առաքել Ն. Պատրիկ, Պէյրութ, 1974, հտ. Բ, Նիւ Ճըրզի, 1983:
- «Պատմագիրք Տիվրիկ քաղաքի», Երուանդ Զարդարեան, Պէյրութ, 1972:
- «Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիւրի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը», դկտր. Հ. Համազասպ Վրդ. Ոսկեան, Վիեննա, Միսիթարեան տպարան, 1962:
- «Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ, տետր Ա, վիճակ 1901 տարուոյ, պատրաստեալ յուսումնական խորհրդոյ Ազգային կեդրոնական վարչութեան», Կ. Պոլիս, 1901:
- «Եղեռնապատում», Գուժկան Սեբաստիոյ (Կ. Գաբրիէան), Պոսթըն, 1924:
- «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին», Թէոդիկ, Թէհրան, 2014:
- «Արեւմտահայութեան թուաքանակի հարցը 1878-1914 թուականներին», Ռոբերտ Թաթոյեան, ՀՀԳԱԱ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ, Երեւան, 2015:
- «Թորգոմ Պատրիարք Գուշակեան», Զարեհ Վրդ. Կաբաղեան, Ս. Էջմիածին, 2002:
- «Պատրիարքական յուշերս», Զաւէն Արքեպս., Գահիրէ, 1947:
- «Միաբանք եւ այցելութիւն Հայ Երուսաղէմի», Մկրտիչ Եպս. Աղաւնունի, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1929:
- «Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը», Վահէ Հայկ, Նիւ Եորք, 1959:
- «Պատմութիւն հայ Կեսարիոյ», Արշակ Ալպոյաճեան, հտ. Ա եւ Բ., Գահիրէ, 1937:
- «Ատանայի հայոց պատմութիւն», Բիւզանդ Եղիայեան, տպ. Կաթողիկոսութեան Մեծ Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1970:
- «Յիշատակագիրք երկոտասանամեայ պատրիարքութեան», Մաղաքիա Արք. Օրմանեան, Կ. Պոլիս, 1910:
- «Երեքդարեան պատմութիւն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Պալատի (1627-1931)», Մելգոն Ասատուր, Կ. Պոլիս, 1931:
- «Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատութեան եւ դաւանանքների մինիստրութեան ներկայացուած հայկական եկեղեցիների եւ վանքերի ցուցակներն ու թաքրիրները», Ա. Խ. Սաֆրաստեան, «Էջմիածին», թիւ Ա, Յունւար 1965, էջ 40-47, թիւ Գ, Մարտ 1966, էջ 57-60:
- «Տիվրիկի շրջակայ հայ գիւղերը», Վահէ, «Հողդար» շաբաթաթերթ, 19 Ապրիլ 1914, թիւ 2 (54), էջ 2, 26 Ապրիլ 1914, թիւ 3 (55), էջ 4:

- «Լուսինեան քահանայական միութիւն Տիվրիկի Օտուռ գիւղի», «Տաճար», Գ տարի, 24 Նոյ. 1912, թիւ 42, էջ 637-638:
- «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան», Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Երեւան, 1986:
- «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», Հ. Սուքիաս էփրիկեան, հտ. Ա, 1902, հտ. Բ, 1907, Վենետիկ, Ի տպարանի Ս. Ղազարու:
- «Յուշամատեան» կայքէջ (houshamadyan.org):
- Index Anaticus (nisanyanyeradlari.com), [Սեւան Նշանեանի տեղանուններու առցանց բառարան]:
- Ermeniler - 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda [Հայերը - Նախքան 1915-ը Օսմանեան կայսրութեան մէջ], Raymond H. Kévorkian - Paul B. Paboudjian, Ստանպուլ, 2012:

Առաջնորդարան Հայոց

Տիվրիկ 16 Մայիս 1913

Տիվրիկ¹

Համար 127 / 353

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց Ի Տիվրիկ, 1886]

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Եպս. Գուշակեան²

Բարեջան Առաջնորդ Հայոց Սեբաստիոյ

I. Ստացանք Ձերդ Սրբազնութեան 12 Ապրիլ եւ 1645 համար պաշտօնականը եւ ներփակ 5 օրինակ հարցարանները: Հստ յանձնարարութեան Քաղաքիս եւ յարակից գիւղերու վիճակացոյցն պատրաստելով կը փութանք ուղարկել Ձերդ Սրբազնութեան, որը՝ պիտի խնդրենք նոյնութեամբ ղրկել առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր³, զոր նոյն ուղղութեամբ Առաջնորդարանէս պահանջուած էր:

II. Բալանկա գիւղէն Աբիկեան Մարիամ անունով 17 տարեկան աղջիկ մը իսլամա-

¹ Տիվրիկի գաւառակը եպիսկոպոսական առանձին վիճակ մըն է՝ Կիլիկիոյ Աթոռին ենթակայութեան տակ, թէև առաջնորդը կը նշանակուէր Կ. Պոլսոյ պատրիարքութեան կողմէ: Տիվրիկի վիճակի այդ շրջանի առաջնորդն էր Խաչատուր Մ. Վրդ. Տէր Ղազարեան (Տիվրիկի կաթողիկոսական փոխանորդ):

² Աւագանի անունով Մկրտիչ Պիլինեան, ծնած է 27 Սեպտ. 1874-ին, Պարտիզակ գիւղը: Եղած է Արմաշու դպրեւանքի առաջին շրջանաւարտներէն՝ կուսակօն Բանանայ ձեռնադրուելով 1896-ին, դպրեւանքի տեսուչ Մաղափա Արք. Օրմանեանի ձեռամբ: Տարի մը վերջ ստացած է վարդապետական, 1902-ին ալ ծայրագոյն-վարդապետական աստիճանները: 1906-ին կը կարգուի Արմաշու դպրեւանքի փոխվանահայր եւ վերատեսուչ, զոր կը վարէ մինչեւ Սեբաստիոյ առաջնորդութեան ընտրուիլը, 1907 թուականը: Ամենայն հայոց Մատթէոս Բ (Իգմիրլեան) կաթողիկոսի ձեռամբ, 1910-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Ս. Էջմիածնի մայր տաճարին մէջ: 1913-ին կը հրաժարի Սեբաստիոյ առաջնորդութենէն: Կարճ ժամանակ մը կը կարգուի Կ. Պոլսոյ Պափրզիկ թաղի Մ. Ս. Աստուածածնի եկեղեցոյ Բարոզի: 1914-ին կը ստանձնէ Եգիպտոսի առաջնորդութիւնը, զոր կը վարէ մինչեւ 1931 թուականը, երբ կ'ընտրուի Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռի պատրիարք: Կը վախճանի 1939-ին: Մարմինը ամփոփուած է Ս. Փրկիչ վանքի միաբանական գերեզմանատան մէջ:

³ Նկատի ունի Կ. Պոլսոյ հայոց Յովհաննէս Արք. Արշարունի (1850-1929) պատրիարքը: Ծնած է Թովգաբու, Կ. Պոլիս: Ազգային վարժարանէ ետք հետեւած է Կալաթասարայի լիսէի ու բժշկական վարժարանի դասընթացներուն: Եղած է ուսուցիչ: 1880-ին ձեռնադրուած է կուսակօն Բանանայ: 1895-ին ընտրուած է Պոստայի առաջնորդ եւ եպիսկոպոսացած: 1911-ին ընտրուած է Կ. Պոլսոյ հայոց պատրիարք, զոր վարած է մինչեւ իր հրաժարումը, 1913 թուականի օգոստոսի սկիզբը: Կեանքի վերջին շրջանին եղած է Բերայի եկեղեցեաց Բարոզի: Մարմինը կը հանգչի Շիշլիի ազգ. գերեզմանատան հոգեւորականաց թաղը:

նալու խնդրանք տուած էր, զոր Զերդ Սրբազնութեան հեռագրած էինք, առաջարկելով թէ՛ 10 տարիներէ ի վեր թուրքերու տուներ սպասարկութիւն ընելով բռնութեան տակ էր, նոյն թուականէն մինչ երէկի օրը ձգձգեցինք եւ նասիէքը⁴ չ'ըրինք, բայց հակառակ ասոնց երէկ պաշտօնապէս իսլամացուցին:

Որդիական համբուրիւ
Առաջնորդ, փոխանորդ
Սերովբէ քհնյ, Բռիկեան⁵

Բալանկա Գիւղի Բնակիչներու Թիւը

	Թիւ	Արու	էգ	Ծանօթութիւն
Մկրտիչ Ախիկեանին տունը	10	5	5	1ը Ամբրիկայ
Լուսիկ Բասղամեանին տունը	3	1	2	-
Պետրոս Ղազիկեանին տունը	7	4	3	-
Կարապետ Ավշարեանին տունը	2	1	1	-
Թորոս Գոչեանին տունը	7	5	2	-
Պօղոս Պօղիկեանին տունը	9	6	3	1ը Զօրք 1ը Ատանայ
Սահակ Տէտէեանին տունը	7	3	4	-
Մելիտոն Ախիկեանին տունը	6	3	3	-
Գալուստ Ախիկեանին տունը	6	3	3	2ը Պոլիս
Եղիա Զատիկեանին տունը	3	1	2	1ը Իզմիր
	60	32	28	

Ա. Բալանկայ⁶ Գիւղս⁷ 10 տասը տունէ բաղկացեալ է⁸

Բ. Ո՛չ Կաթուղիկ եւ ո՛չ Բողոքական կայ.

Գ. Ո՛չ Թուրք կայ ո՛չ Քիւրտ եւ ո՛չ ալ Զէրքէզ:

Դ. Ազգային անշարժ կալուած չ'ունինք.

Ե. Ունինք մէկ եկեղեցի Ս. Աստուածածնայ անունով. Փայտաշէն, շինութեան թիւը չենք գիտեր⁹.

Զ. Գիւղին մօտերը ունինք երկու ուղտատեղի աւերակ. մին Նէրսէս Հայրապետ

⁴ Պէտք է ըլլար նասիհաթ, այսինքն՝ թելադրանք, խրատական, զոր օրէնքով կու տային հոգեւորականները՝ կրօնափոխ ըլլալ փափաքողներուն:

⁵ Ծնած էր 1880-ին, Տիվրիկ: Հոգեւոր կրթութիւնը ստացած էր Կեսարիոյ Ս. Կարապետի վանքի ժառանգաւորաց վարժարանէն: Նահատակուած է 1915-ի Ցեղասպանութեան շրջանին:

⁶ Կան Բալամուղ, Բալընկայ ձեւերն ալ:

⁷ Գիւղը, որ այսօր կը կրէ Էօլչեֆի անունը, Սվազէն դէպի հարաւ-արեւելք 216 ֆմ., Տիվրիկէն դէպի հիւսիս-արեւմուտք 39 ֆմ. հեռաւորութեան վրայ է: Կը գտնուէր մշակուած հարթ դաշտի մը վրայ:

⁸ Թէոդիկ իր «Գողգոթա հայ հոգեւորականութեան» աշխատութեան մէջ այս գիւղին համար նոյնպէս կը նշէ 10 տուն՝ բնակչութեան թուաքանակը դնելով իբր 40 անձ (ոչ ոք վերապրած Ցեղասպանութիւնը): Իսկ Գէորգեան-Փապունեան Les Arméniens-ի մէջ գիւղին հայ բնակչութեան համար նշած են 480 թիւը: «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան»-ի համաձայն, գիւղը ունէր շուրջ 20 տուն հայ բնակչութիւն: Իսկ Կարապետ Գաբիկեան «Եղեռնապատում»-ին մէջ կը նշէ, թէ գիւղը ունեցած է 30 տուն եւ 240 անձ հայ բնակչութիւն:

⁹ Այն աղբիւրները, զոր տեսած ենք, կը նշեն, որ եկեղեցւոյ անունը Ս. Գէորգ էր: Միայն «Տեղանունների բառարան»-ն է որ տուած է Ս. Աստուածածին անունը: Իսկ Կ. Պոլսոյ պատրիարքութեան կողմէ օսմանեան իշխանու-

Կլայեցի եւ միւսը Ս. Սարգիս, կալուածք ունենալնին մենք չենք յիշեր:

Է. Գիւղիս Վարժարանին անունն է Լուսինեան¹⁰ եւ Ուսուցիչ մէկ հատ, Տիվրիկի դպրոցէն ելած 100 հարիւր դահեկան ամսաթոշակ կ'ստանայ, Մանչ եւ Աղջիկ միասին կը կարդան 8 ութը Աղջիկ 10 տասը տղայ, Դպրոցը փայտաշէն է շինութեան թիւը չենք գիտեր, Պետական արտօնագիր չ'ունի¹¹:

Ը. Գիւղին քահանան 18 տասն եւ ութ տարի է որ վաղճանած է, Քահանայ չ'ունինք, Քահանայ մը պահելու կարօղութիւն չունինք:

Թ. Դպրոցնիս ալ Լուսինեան Քահանայական Միութիւնէն¹² կը հոգացուի, առայժմ.

Ժ. Բալանկա Գիւղէս Աբիկեան Մարիամ անունով 17 տարեկան Աղջիկ մը իսլամացաւ Թէ գիւղէն եւ թէ քաղաքէն շատ պնդեցինք եւ թէ աղաչեցինք կառավարութեան գոնէ մեզի 2 ժամի չափ աղջիկը Առաջնորդարան յանցնեն որ քննենք հոս քննեցէք ըսին ու չ'տուին եւ բռնութեամբ իսլամացուցին: 1913 Մայիս 1 իսլամացաւ:

Կ'ստորագրեմք Բալանկայ գիւղիս Թաղ, Խորհրդ, կողմանէ

Ատենապետ

Ատենադպիր

Անդամք

[պատուած էջ]

Սահակ Տէտէեան

Լուսիկ Բասղամեան

[կայ հայատառ երկու կնիք, որոնցմէ մէկուն վրայ գրուած է ՊԵՏՐՕՍ¹³, իսկ միւսը արաբատառ է]

[աջ լուսանցքին]

Քաղաքիս Բալանկա գիւղի թաղ, Խորհրդոյ կնիք եւ ստորագրութիւնները կը հաստատեմ:

1913 մայիս 11

Տիվրիկ

Առաջ, փոխանորդ

Սերովբէ քհնյ, Բռիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց Ի Տիվրիկ, 1886]

* * *

Տեղեկագրութիւն

Տիվրիկոյ Ս. Գրիգոր Լուսաւորչայ վանուց

Դէպի հիւսիս քաղաքէս 2½ ժամ հեռու կը գտնուի սոյն վանքը, հաստատուած Կիւ-

թիւներուն յանձնուած ցուցակին մէջ (1912-1913) ալ նշուած է այս անուամբ եկեղեցւոյ գոյութեան մասին՝ հիմնադրութեան անյայտ թուականով:

¹⁰ Ի դարակիզբին այս վարժարանը փակ էր:

¹¹ Օրմանեան իր «Յիշատակագիր»ին մէջ կը նշէ, թէ համիտեան շրջանին կառավարութիւնը դպրոցներուն արտօնագիր չէր տրամադրէր, որովհետեւ վերջիններս յանձնառու չէին ըլլար պետութեան պայմաններուն:

¹² Լուսինեան ֆանանայական միութիւնը հիմնադրուած էր Տիվրիկի Օտուո գիւղին մէջ, 1 Յուլիս, 1912-ին եւ Կիլիկիոյ Սահակ Բ կաթողիկոսին կողմէ վաւերացուած՝ 7 Օգոստոս, 1912-ին: Միութեան ատենապետն էր Գէորգ Քինյ. Աբգարեան: Միութեան կանոնագրի 12-րդ յօդուածը կը նախատեսէր պաշտպանել դպրոցի եկամուտները, գտնել եկամուտի աղբիւրներ:

¹³ Թերեւս ըլլայ գիւղի բնակիչներէն Պետրոս Ղազիկեանի կնիքը:

րեղ իշխանի մը ձեռքով, Հայոց Սենեքերիմ թագաւորի Սեբաստիա հաստատուելէն վերջ 1021ին. այս հաստատութիւնը հիմնադրին անունով կը կոչուի Կիւրղի անապատ, մինչեւ 1263, երբ Ամասիացի Ղազար արեղայի նախաձեռնութեամբ տեղի կ'ունենայ նորոգութիւն մը եւ անունը փոխուելով կ'ըլլայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ի յարգանս եւ ի յիշատակ հիմնադիր Կիւրեղ իշխանին ձգած արքայանուէր Ս. Նշխարին, որուն արծաթեայ ոսկեզօծ տուփին վրայ գրուած յիշատակարանով կը հաստատուի սոյն պատմական մասը:

Սոյն վանքին սահմաններն են Հիւսիսէն Բերդաֆար կոչուած լեռ մը, որ կը զատէ վանքը իրեն սահմանակից Խուռնավիլ գիւղէն, Արեւելքէն Չաթալօլտֆ կոչուած աղբերակը դէպի հարաւ Տիվրիկ երկարող ճամբու երկայնքով՝ Սիւօր-Տէրէսի ձորը որ Հարաւէն կը զատէ վանքը սահմանակից Մրվանայ գիւղէն, Արեւմուտքէն՝ թուրք Նորչէն գիւղի չալը¹⁴, որ կ'երկարի մինչեւ Բերդաֆար:

Վանքը պետական արտօնագրի մը համաձայն եւ Ուֆացի Յակոբ Եպիսկոպոսի միւսթէլլիոսթեամբ¹⁵ զերծ մնացած է աղմամի¹⁶, աշարի¹⁷ եւ այլ պետական տուրքերէ, մինչեւ 1895, այս թուականին կապուած աղեխարշ դէպքէն ընդ այլոց կորսուած է յիշեալ արտօնագիրը, եւ անկէ ետք կառավարութիւնը սկսած է պահանջել պետական տուրքերը ամենախիստ եղանակով, չարաղէտ դէպքին վանքը կորսնցուցած է աւելի քան երկու հարիւր ոչխար եւ արջառ ինչպէս նաեւ 20-30 օխայ կշիռով¹⁸ արծաթեղէն սրբազան անօթներ եւ մեծ քանակութեամբ պղնձեղէն եւ այլն եւ այլն:

Այժմ վանքը իր գոյութիւնը կը պահէ երկյարկի քսանէ աւելի սենեակներով եւ այլովք: Ունենալով նաեւ երկու քարուկիր փոքրիկ հին ու նոր եկեղեցիներ¹⁹, որոց վերջնոյն կամարը խախտած ըլլալով նորոգութեան պէտքը անհրաժեշտ սեպուած է:

Վանքը իբր կալուած քաղաքին մէջ ունի մէկ խանութ 250 դահեկան²⁰ տարեկան եկամուտով եւ կը մատակարարուի հոգաբարձութեան մը միջոցաւ ուխտաւորներու նուէրներով եւ վիճակիս մէջ հաւաքուած պտղիներով:

1898ին հաստատուած է որբանոց մը²¹ պատրիարքարանէ յատկացուած նախապէս երեք եւ յետոյ հինգ ոսկի ամսական նպաստով, ուր պատսպարուած են 25-30 որբեր, ուսման համեստ ծրագրով մը, որբերու այս թիւը հետզհետէ պակսած է պատրիարքարանէ եւ այլ բարերարներու նպաստներուն նուազումով, որբանոցը փակուած է 1910ին, այս թուականէն սկսեալ 8-10 գործաւորներով կը մատակարարուի վանքը իր ունեցած 20 կտորի չափ ջրարբի եւ անջրդի արտօրէից հասոյթ<ով>:

Միաբանութիւն չունի, 30 տարիներէ ի վեր կը գտնուի Արղնցի (Տիգրանակերտ) մ[ա]հ[տես]ի Կարապետ անուն 70 տարեկան անձնաւորութեան մը ուղղակի հսկողու-

¹⁴ Առու (թրֆ.):

¹⁵ Այսինքն՝ հոգաբարձութեամբ:

¹⁶ Ոչխար, այժ եւ նման անասուններու համար գանձուած պետական տուրք:

¹⁷ Գիւղացիներու արտադրանքէն գանձուած պետական տուրք, 10 առ հարիւր տոկոսով:

¹⁸ 1 օխան հաւասար էր 1282 կրամի, ուրեմն 20-30 օխան կը համապատասխանէր 25,64-38,46 կգ-ի:

¹⁹ Կ. Պոլսոյ պատրիարքութեան կողմէ օսմանեան կառավարութեան յղուած ցուցակին համաձայն, Տիվրիկի Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքին մէջ կային երկու եկեղեցիներ՝ Ս. Լուսաւորիչ եւ Ս. Յովնանէն Մկրտիչ անունով. երկուքի պարագային ալ կառուցման թուական նշուած է 1200-1201-ը:

²⁰ Այսինքն՝ դրուշ:

²¹ Որբանոցը բացուած էր 24 մայիս 1898-ին: Տնօրէնն էր Գարեգին Սրկ. Ասլանեան (հետագային՝ Գեորգ Արք. Ասլանեան): Հաստատութեան խնամակալութեան նախագահն էր Տ. Յակոբ Քհնյ. Պալթայեան, ատենապետը՝ Գրիգոր Սուփասեան:

Թեան տակ ընդ հովանեաւ ընտրուած հոգաբարձութեան:

1913 Մայիս 13

Տիվրիկ

Ստուգութիւնը կը հաստատենք
Միացեալ Թաղական Խորհուրդ Տիվրիկոյ

Անդամ Աւետիս Իլլանճիեան

Անդամ Յովհաննէս [անընթեռնելի]

Անդամ Կարապետ [անընթեռնելի]

Անդամ Հայրապետ [անընթեռնելի]

Անդամ Թորոս Ճէլպեան

Անդամ Կարապետ Սարգիսեան

Ատենադպիր Յովհաննէս Ծաղիկեան

Ատենապետ Աւետիս Կ. [անընթեռնելի]

Նախագահ Գրիգոր Քահանայ Զարդարեան²²

[կնիք՝ Միաց. Թաղ. Խորհուրդ Հայոց Ս. Եկեղ. Տիվրիկի -1911]
[Խաւի էջին]

Քաղաքիս Արժ. Տ. Գր. Քհնյ. Զարդարեանի եւ Պատ. Միաց. Թաղական Խորհրդոյ
Ստորագրութիւնները եւ կնիքը կը հաստատեն:

1913 Մայիս 13

Տիվրիկ

Առաջնորդ. Փոխանորդ Տիվրիկոյ
Սերովբէ Քհնյ. Բռիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

* * *

[Սիննա²³]

1. Գիւղիս բնակիչները 135 արու 116 էք ընդամենը 251 անձ²⁴ 53 տունէ բաղկացեալ է²⁵
2. Ուրիշ քրիստոնեայ ազգ չիկայ կամ կաթոլիկ կամ փողոքական
3. 25 տունէ բաղկացեալ թուրք ղզլպաշ կան 67 արու 54 էք է եւ երկու մէզրէ²⁶ սյու-
նի տաճիկ ղզլպաշ որոնք 14 տունէ կը բաղկանան
4. 52 հատ բանտուխտ ունինք Ամերիկայ Պոլիս Պուլկարիա եւ զօրք
5. Ազգաին կալուած մէկ եկեղեցի եւ մէկ դպրոց ունինք գիւղերնիս բռնակալ աղա-
ներու կը պատկանի տուն արտ ամէն ինչ մենք շինած եւ մեր ճակտի քրտինքով յառաջ
բերած ենք հիմակ ո եւ է մէկ բանի տէր չեն ընէր մեզ
6. 1 եկեղեցի ունինք փատաշէն անունը Սբ. Գեորգ է <հրովարտակ չունի>²⁷ 12 տարի
յառաջ նորոգուած է պատրաքարանի օքնութեամբ²⁸ իսկ հինը որ ժամանակէ ըլ<ա>լը

²² Ծնած էր 1870-ին: Նահատակ Մեծ Եղեռնի: 1900-1909 թուականներուն եղած է առաջնորդական փոխանորդ:
Բանտին մէջ ենթարկուած է սառսափելի կտտամբներու (եղունգ փաշէլ, ներքաններուն պայտ գամել, մորթազեր-
ծել): Հոն ալ նահատակուած է:

²³ Գիւղը կը գտնուի Տիվրիկէ շուրջ 2,5 ֆմ դէպի հիւսիս-արեւմուտք, Տիվրիկ-Զառա համբու վրայ:

²⁴ Գէորգեան-Փապունեանի տուեալներով գիւղի բնակչութեան փառակը 395 անձ էր: 1902-ի տեղեկագրին հա-
մաձայն, գիւղը ունէր 124 արու եւ 125 կին բնակիչ:

²⁵ Ըստ «Տեղանունների բառարան»ի, Սիննան Ի դարասկզբին ունեցած էր 70 տուն հայ բնակչութիւն:

²⁶ Այսինքն՝ գիւղակ:

²⁷ Այս արտայայտութեան վրայ գիծ փաշուած ու ջնջուած է:

²⁸ Սիննանի թաղային Խորհուրդը 20 Դեկտ. 1899 թուակիր նամակով մը Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանը տե-
ղեկացուցած էր, որ գիւղին փայտաշէն եկեղեցին փլած է տարի մը առաջ: Այս եկեղեցին նոյն շրջանին ալ կը

չենք գիտեր²⁹

7. Գիւղերնուս պատկանած վանք չունինք հին ուխտատեղեր ունինք բայց աւերակ են մէկը Սբ. Թորոս մէկը Սբ. Յակոբ

8. Վարժարանիս անունը երկսեր արմենեան է³⁰ ուսուցիչ չունի 35 տղայ եւ 25 աղջիկ աշակերտ ունի եւ փատաշէն է հրովարտակ ունի 1912 թուականին նորոգուած է Եգիպտոսի Բարեգործնական ընկերութեան³¹ օգնութեամբը

9. Աղջիկան զատ վարժարան չունինք

10. Մեր քահանան Տիվրիկցի Սուքիասեան Խաչատուր իր նախկին անունը եւ հիմակ ալ Արիստակէս Քահանայ³² կը կոչուի թշուառ ըլլալովնիս մէկտեղ երկու ամիս մնաց հիմակ Օտուռ փախաւ ինք ալ (40) քառասուն տարեկան կայ

11. Երեսուն տարուան մէջ մէկ օրիօրդ թրքացած է հիմակ ողջ է աժմ գիւղիս մէջ կը գտնուի թուրքի տուն է

12. Դպրոցի ծաղքին ամեն ժամանակ կարօտն եմք ատ պատճառաւ ան շատ ժամանակ գոց է դպրոցնիս:

Արժանապատիւ Տէր
Սերոբէ Քահանայ Բռիկեան
Առաջնորդա. փոխորդ. Տիվրիկայ

1913 Մայիս 7 թիւ ուղարկած նամակիդ պատասխանը այժմ ստիպուեցանք ուղարկել արժանապատուութեանդ համբուրելով աջդ

1913 Մայիս 10

Ի Սինճան

Ի դիմաց թաղ. խորդ Սինճան գիւղիս

Ատենապետ Չաքրեան Մանուկ

Անդամ Քէշէլեան Գրիգոր

Ատենադպիր Զատաքեան [կնքած է]

Անդամ Գորգոեան Մանուկ

Քաղաքիս Սինճան գիւղի Պատ. Թաղ. Խորհրդի ստորագրութիւնները կը վաւերացնենք:

1913 Մայիս 12

Տիվրիկ

Առաջնորդ. Փոխանորդ Տիվրիկայ

Սերովբէ Քհնյ, Բռիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց Ի Տիվրիկ, 1886]

վերանորոգութի:

²⁹ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի կողմէ օսմանեան իշխանութիւններուն տրուած ցուցակին համաձայն, եկեղեցիի կառուցման թուականը 1897-1898 էր:

³⁰ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարանի ուսումնական խորհուրդին կողմէ 1901 թ. հրապարակուած «Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց թուրքիոյ» աշխատութեան համաձայն, Սինճան գիւղի դպրոցը կը կրէր Ս. Լուսատւչեան անունը, ունէր երկու դասարան եւ յիշեալ թուականին ուսում կը ջամբէր քառասուն մանչ աշակերտի: Հոն կը պաշտօնավարէր այր ուսուցիչ մը:

³¹ Նկատի ունի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

³² Արիստակէս Քհնյ. Սուրիասեան ծնած էր 1873-ին: 1915-ին կը նահատակուի Օտուրի մէջ:

* * *

[խոսումովի³³]

1. Գիւղս կը բաղկանայ (155) հարիւր յիսուն եւ հինգ տուներէ ունենալով 720 արու եւ 438 իգական բնակչութիւն: Համագումար 1158³⁴:

2. Գիւղին մէջ քաթուղիկ ու բողոքական չ'կայ:

3. Գիւղին մէջ չկայ նաեւ քիւրտ, թուրք ու չէրկէզ:

4. Գիւղէս (295) անձեր պանդխտացած են³⁵ (130) Կ. Պոլիս³⁶ (42) Սըվազ (28) Պուլկարիա (9) Եգիպտոս (86) Ամերիկա:

5. Ազգ. անշարժ կալուած ըլլալով ունիմք մէկ ջաղացք (135) [անընթեռնելի բառ] արժողութեամբ կալուածական տուրքը ըլլալով նախորդ տարիներ (133^{1/4}) ղր. իսկ ներկայ տարւոյ համար (159^{1/4}) ղր. վճարուած է. տարեկան հասոյթն է իւրաքանչիւրը (160) [անընթեռնելի բառ] կշռող [անընթեռնելի բառ] տասը [անընթեռնելի բառ] ցորեան:

6. Գիւղը ունի մի քարաշէն եկեղեցի (1851)ին կառուցուած Ս. Գր. Լուսաւորիչ անուն³⁷:

7. Գիւղէն մէկ ժամ հեռաւորութեամբ դէպի հիւսիս ունիմք Գոհանամ անունով մէկ փոքրիկ վանք. ինչպէս նաեւ գիւղի մէջ ու մօտերը Ս. Գէորգ, Ս. Թորոս եւ Ս. Աստուածածին եկեղեցաց աւերակներ:

8. Գիւղը ունի մէկ մանչերու վարժարան Ս. Գր. Լ.³⁸ անուան նուիրուած կառուցուած երկյարկանի փայտաշէն ի (1865) ուր կը յաճախեն գրեթէ (110) մանչեր ուսուցիչ ունենալով Տիար Գեղամ Կ. Գլըճեան ընթացաւարտ Մեզիրէի Ս. Ներ. Ազգ. երկսեռ վարժարանէ³⁹ ստանալով երեք օսմ. ոսկի ամսաթոշակ եւ իբր օգնական տիար Յովհաննէս Գօշեան ընթացաւարտ գիւղիս վարժարանէն ստանալով մէկ օսմ. ոսկի ամսաթոշակ. վարժարանը պետական արտօնագիր չ'ունի:

9. Ունի նաեւ յարակից համանուն աղջկանց վարժարան մը ուր կը յաճախեն 70-ի մօտ աղջիկներ ուսուցչուհի ունենալով տիկին Զարուհի Գ. Գլըճեանը ընթացաւարտ ըլլալով Ակնայ Ներս. վարժարանէ⁴⁰ ամսաթոշակ կստանայ մէկ օսմ. ոսկի շէնքը փայտա-

³³ Գիւղիս ներկայի անունն է Մալթեփէ: Կը գտնուի Տիվրիկի կեդրոնէն դէպի արեւելք 17 ֆմ. հեռաւորութեամբ: Ծանօթ է խոնավիլ, խոնավուլա, խոնավուլ, խոնավել, խոնավուլ, խոնավուլա եւ մման անուններով եւս:

³⁴ Գեորգեան-Փապունեան գիւղին բնակչութեան թիւը կը նշեն իբր 320 անձ: Թէոդիկի տուած թիւը այս տուեալներուն աւելի մօտ է 1500 անձ, այսինքն 130 տուն: Իսկ «Նդեռնապատում»ի տուեալներուն համաձայն, գիւղը ունեցած է 150 տուն, 1200 անձ բնակչութիւն: Այս թիւը կը կրկնէ նաեւ «Տեղանունների բառարան»ը: Ըստ Թէոդիկի, Մեծ Նդեռնէն վերապրած էին 144 անձեր: Ըստ Սեբաստիոյ պատմագիր-յուշամատենի, գիւղը ունէր 120 տուն, զոտ հայութիւն: Իսկ «Բնաշխարհիկ բառարան»ը կու տայ 80 տուն: Ըստ 1902-ի տեղեկագրին, գիւղը ունէր 450 արու, 488 կիւն բնակիչ:

³⁵ Սեբաստիոյ յուշամատենի տուեալներով, գիւղը ունեցած է 240 պանդուխտ:

³⁶ Պոլիս գտնուող պանդուխտները առհասարակ Բերայի եւրոպացիներուն սպասատներն էին: Բերայի բնակիչ խոնավիլները 1885-ին բողոքի նամակ մը յղած են պատրիարքարան:

³⁷ Կ. Պոլսոյ պատրիարքութեան պատրաստած ցուցակին մէջ եկեղեցւոյ կառուցման թուական նշուած է 1839-1840-ը, զոր կը գտնենք նաեւ 1902-ի տեղեկագրին մէջ:

³⁸ Դպրոցի վերաշինութեան համար հիմնուած էր Լուսաւորիչեան ընկերութիւնը, 1879-ին, Պոլսոյ մէջ: Ընկերութիւնը դպրոցի շէնքը կը կառուցէ, ուր 1881-ին ուսում կը ստանային 95 աշակերտներ: Դպրոցը ունէր 8 կարգ եւ երկու ուսուցիչ: Ընկերութեան նուիրատուներու շարքին էր նաեւ յայտնի բարերար Աբիկ Ունեան: 1901-ին աշակերտութեան թիւը հասած էր 120-ի:

³⁹ Մեզիրէի մէջ այս անունով դպրոց մը եղած չէ, ուրեմն խնդրոյ առարկան Թլկատիինի Ներսէսեան վարժարանը ըլլալու է, որ հիմնուած էր 1870-ականներուն ու կոչուած ժամանակի պատրիարք Ներսէս Վարժապետեանի անունով:

⁴⁰ Ակնի Վարի թաղի Ներսէսեան վարժարանը հիմնադրուած էր 1855-ին: Յայտնի շրջանաւարտներէն էին բանաստեղծ Ատոմ Նարնանեան (Սիամանթո), Նրուանդ Թիմուրեան (Աշոտ Երկաթ):

շէն ըլլալով կառուցուած է 1912ին:

10. Ունիմք Տ. Եւսեբիոս Քհնյ. Թաթարեան (58) յիսուն եւ ութը տարեկան նախկին անունը ըլլալով Մանուկ ձեռնադրուած է Սվազ հանգ. Տ. Պետրոս եպիսկոպոսէ⁴¹ ի թիւ (1899):

11. Վերջին 30 տարիներու մէջ իսլամացած է միայն մէկ աղջիկ Մարիամ Նուէրեան ողջ կը գտնուի ի Նորշէն թուրք գիւղ մէկ ժամ հեռու դէպ [անընթեռնելի բառ]:

12. Այս երկու քոյր կրթական հաստատութիւններ կը մատակարարուին գլխաւորաբար կալուած եղող նոյն ջրաղացքի հասոյթով ինչպէս նաեւ բարերարներու նուիրատուութեամբ ու վերնկոշեալ ուսումնասիրաց անուն ընկերութեան⁴² մասնաւոր օժանդակութեամբ:

Ներկայ տեղեկագիրը Տիվրիկոյ Պատկ. Քաղ. Ժողովոյ պատ. անդամներու Տիար Համբարձում Կոչոյեան եւ Տիար Սողոմոն [անընթեռնելի]եանի ներկայութեամբ ու խորհրդակցութեամբ պատրաստուած ըլլալով անոր ճշդութեան մեր Ազգ. Առաջնորդարանի ներկայացուած 2 Մայիս 913 թուին եւ 121/347 թուահամար հարցարանի համաձայն համապատասխան ըլլալը կը հաստատեմք:

4 մայիս 913

Խուռնաւիլ

[կնիք թաղային խորհրդի]

Թաղ. Խորհուրդ

Անդամք

Մկրտիչ Պետեան [կնքած է՝ ՔԾ Մկրտիչ]

Անդամ

Վրդանէս Գոչեան

Ատենադպիր

Աբրահամ Սրապեան

Ատենապետ

Համբարձում Գոչեան

Նախագահ

Եւսեբիոս Քհնյ. Թաթարեան

Քաղաքիս Խուռնավիլ գիւղի Արժ. Տ. Եւսեբիոս Քհնյ. Թաթարեանի եւ Պատ. Թաղ. Խորհրդոյ ստորագրութիւնները կը վաւերացնենք:

1913 Մայիս 7

Տիվրիկ

Առաջնորդ. Փոխանորդ

Սերովբէ Քհնյ. Բոիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

⁴¹ Պետրոս Եպս. Թանմիզեան ծնած էր Սեբաստիա, 1816-ին: Կրթութիւնը քաղաքին մէջ ստանալով, կը մտնէ Ս. Նշանի վանք: Վարդապետ կը ձեռնադրուի 1851-ին, Կարապետ Եպս. Գալֆաեանէ: Սեբաստիոյ առաջնորդութիւնը վարած է 1870-1907 թուականներուն: Վախճանած է 1907:

⁴² Ուսումնասիրաց ընկերութիւնը հիմնադրուած էր 1909-ին եւ նպատակն էր գիտլին մէջ հիմնադրել դպրոց մը:

* * *

[Աշուղէն⁴³]

Թաղ. Խորհրդարան
Տիվրիկ-Աշուղէն

24 ապրիլ 1913
Աշուղէն

Սեփաստիոյ Հայոց Առաջնորդարանի պաշտօնական շրջաբերական հրահանգին համաձայն, որ կը կրէր 28 Մարտ 1913 համար 1596ը եւ զոր ստացանք 22 ապրիլ 913ին, նիստ գումարելով եղած հարցումներուն ստորեւ կը պատասխանենք:

1. Գիւղիս Հայ բնակչութիւնը կը բաղկանայ 92 իննսուներկու տուներէ, որոնց 228ը արու եւ 226ը էգ են, գումար 454⁴⁴:

2. Կաթորիկ եւ բողոքականներ չկան:

3. Միմիայն Ալիական 8 տուն թուրքեր կան⁴⁵, 20 արու եւ 28 էգ բնակիչներով, գումար 48:

4. Գիւղէս 73 պանդուխտներ ունինք, որոնց 35ը Ամերիկա, 10ը Պուկարիա, 25ը Պուլիս եւ 3ը Եգիպտոս:

5. Գիւղիս եկեղեցին իբրեւ անշարժ կալուած ունի (զոր գիւղիս բնակիչք իրենց նուէրներովը եւ ջանքերով գոյացուցած են) 1. մէկ ջրաղաց, որ միայն 3 ամիս կը դառնայ ջրի նուազութեան պատճառաւ. հասոյթ կը բերէ 600 դահեկան⁴⁶. կառավարական տուրքն է 55 դրշ., արժէքը 5000 դրշ.: 2. Տիվրիկիի եւ Խանղալի⁴⁷ սահմաններուն միացած հողին վրայ Թումրուճա ըստած լեռը ագարակ մը եւ արօտատեղի մը, ագարակին մէջ 20 տուներէ բաղկացեալ Ալիական թուրքեր կը նստին իբրեւ վարձակալ: Տարեկան հասոյթն է 1500 դահեկան: Տիվրիկիի հողամասին կառավարական տուրքն էր 130 դրշ., նոյնպէս Խանղալի հողամասին կառավարական տուրքն էր 130 դրշ., սակայն 1896ի քաղաքական շփոթութեանց ժամանակ ագարակին վարձակալները այս վերջին հողը մեր ձեռքէն խլելու համար 280 դրշ.ի էմլաքով Գօշան⁴⁸ կտրել կու տան իրենց անունին, դատավարութեամբ եւ բազում ծախքերով տէր դարձանք մեր հողին սակայն այն օրէն ցայսօր կառավարութիւնը յանիրաւի կերպով եւ կրկնակի այս 280 դրշ.ն ալ կը գանձէ մեզմէ: Յիշեալ արօտավայրին վրայ ունինք 40 տուներ, որոնց կառավարական տուրքն է 75 դրշ., մեր գիւղացին ամառը 4 ամիս իր հօտերը կը հանէ արօտատեղին եւ կը բնակի սոյն տուններուն մէջ: Ագարակ եւ արօտավայր գիւղէս 1^{1/2} ժամ հեռաւորութիւն ունին: Մեր նախնիք սոյն կալուածը երբ գնած են, նկատելով որ այն ժամանակ Հայ անունին փոխանցում չէր կատարուէր, Գիւղիս ժամանակուայ քահանայ Տէր Ստեփան Քիզիրեանի եւ Տիվրիկցի Միւֆթի օղլու կոչուած թուրքի անուանց կը փոխանցուի. թուրքին ժա-

⁴³ Գիւղս, որ Տիվրիկէն 11 ֆմ. հեռաւորութեան վրայ է՝ դէպի հարաւ-արեւմուտք, ներկայիս կը կոչուի Կիւնէյվլեր (Հարաւային տուներ): Գիւղին անունը որոշ աղբիւրներ կու տան Արշուան, Աշուղա, Արշուղէն, էշուղան, էրշուն, Արշուն ձեւերով եւս:

⁴⁴ Ըստ Գեորգեան-Փապունեանի գիւղի բնակչութեան թիւն էր 310, մինչդեռ Թէոդիկ կու տայ 686 թիւը (76 տուն)՝ յայտնելով, թէ Մեծ Եղեռնը վերապրած էին միայն 30 անձ: Գաբիկեան կու տայ 100 տուն՝ 800 անձ բնակչութեամբ: Իսկ Էփրիկեանի տուեալներով. գիւղը ունեցած էր 700 բնակիչ: 1902-ի տեղեկագրին համաձայն գիւղի բնակիչ այրերու թիւն էր 268, իսկ կիներունը՝ 271: Երկրագործութիւնը եղած է անոնց գլխաւոր զբաղումը:

⁴⁵ Թէոդիկի համաձայն ալիական թուրքեր, այսինքն՝ ղըզըլպաշերը 7 տուն ունէին գիւղին մէջ:

⁴⁶ Այսինքն՝ դրուշ:

⁴⁷ Խանղալ գաւառակը կը գտնուէր Տիվրիկի գաւառակէն դէպի արեւմուտք:

⁴⁸ Այսինքն՝ վճարեալ տուրքի անդորրագիրը:

ռանգորդները քաղաքական պարագաներէ օգտուելով յանիրաւի կիսարար դարձած են կալուածին⁴⁹: 3. Պոլիս Վալիտէ խանի⁵⁰ մէջ կան հնացած 7 կտոր սենեակներ որոնց տարեկան հասոյթն է 1600 դրշ: Կառավարական տուրքն է 560 դրշ. արժէքը...

6. Մէկ եկեղեցի ունինք փայտաշէն եւ խարխուլ, շինուած 1832 թւոյն, անունը Ս. Մոգուց թագաւոր⁵¹:

7. Գիւղին մէջ կամ մօտերը վանքեր չկան. մատուռներ ունինք, Ս. Լուսաւորիչ, Ս. Մուրատ, Ս. Գէորգ հին գերեզմաններով:

8-9. Վարժարանը երկսեռ է, անունը Սմբատեան, ուսուցիչն է Զիմառացի Յովհաննէս Քոչեանը, Զիմառացի դպրոցէն⁵² ելած, Կեդր. Ուսումն. Խորհրդէն եւ մէարիֆէն⁵³ վկայեալ, թոշակը 30 լիւրայ⁵⁴: Ունի 60 աշակերտ եւ 16 աշակերտուհիներ: Շէնքը եկեղեցւոյ մօտ եւ հողին վրայ նախապէս միայարկ սենեակ մը, յետոյ վրան սենեակ մ'ալ շինուած, որը ներկայ դպրոցական մանկավարժական եւ առողջապահական պահանջներուն բնաւ չ'համապատասխանէ: Տուրք չ'վճարեր եւ պետական արտօնագիր չունի: Շէնքին անբաւականութիւնը նկատի ունենալով նոր դպրոց մը կառուցանելու⁵⁵ համար գետին մը գնուած է, որը նոյնպէս պետական արտօնագրի կը կարօտի. (կը խնդրուի որ նոր կառուցանելիք դպրոցին արտօնագիրը առնուի որպէսզի անյապաղ ձեռնարկուի շինութեան եւ այդու փրկուի Գիւղիս ուսանողութիւնը[]):

10. Քահանանիս է Տէր Խոսրով Գրիգորեան⁵⁶, գիւղիս բնիկներէն ձեռնադրուած է Սեփաստիա Տէր Պետրոս Եպիսկոպոսէն 1899ին. նախկին անունը՝ Խաչատուր, ծնած է 1859ին այժմ այրիացած է:

11. Գիւղիս բնակիչներէն 30 տարուայ ընթացքին իսլամացող չէ եղած:

12. Դպրոցական ծախքերնուս մէկ մասը կը հոգացուի եկեղեցական կալուածոց իրենց սեփական ծախքերէն աւելցած հասոյթներէն եւ պակաս մնացած մասը ժողովրդեան նուէրներէն եւ պանդուխտներուն օժանդակութենէն:

13. Գիւղիս բնակչութեան ապրուստի միակ միջոց համարուած հողի $\frac{3}{4}$ մասը վերջին 17 տարուայ ընթացքին բաղադրեալ տոկոսի հաշուով եւ աժանագին անցած են Տիվրիկիի էշրաֆ-միւթէղալիպէ⁵⁷ դասակարգին ձեռքը, եւ չկայ մէկ տուն որ կարենայ իր ձեռքը գտնուած հողովը իր ընտանեաց տարեկան ուտեստը հանել:

⁴⁹ Աշուշէն հողի տեսակէտէ եղած է շրջանի գիւղերէն ամենահարուստը: Պարագաներու բերմամբ սակայն բաւական հողեր ծախսուած են: Շնորհիւ պանդխտութեան, գիւղացիները սկսած էին ետ գնել իրենց հողերը: Հողերու վերագնումը դիւրացնելու համար գիւղացիները քաղաքացի հողատէրերու դէմ պայքար կը կազմակերպեն եւ քաղաքացիները իրենց անմշակ մնացած հողերը ստիպուած կ'ըլլան ծախելու:

⁵⁰ Ժէ դարուն, Օսմանեան Մուրատ Դ սուլթանի մօտ՝ Քէօսէմ տիկնոջ կողմէ կառուցուած առետուային կարետը կեդրոն, էմինէօնի թաղամասի, Չաֆմաֆըլարի գաղիվերին վրայ:

⁵¹ Թէոդիկ կը փոխանցէ աւանդութիւն մը, ըստ որո՛ւ մանուկ Յիսուսին երկրպագութեան փութացած երեք մոգերէն մէկը մահացած էր այս գիւղին մէջ: 1902-ի տեղեկագրին մէջ նշուած է, թէ Ս. Թագաւոր եկեղեցին հիմնադրուած է անյիշելի ժամանակներուն, սակայն նորոգուած է 1832-ին: Պատրիարքարանի 1914-ի ցուցակին վրայ ալ կը կրկնուի այս տեղեկութիւնները: Ըստ «Հողդար»-ի, այս եկեղեցին ո'չ միայն շրջանի, այլ քաղաքի եկեղեցիներէն իսկ հարուստ էր:

⁵² Զիմառացի դպրոցը կոչուած է Յակոբ Արք. Նալեան պատրիարքի անունով:

⁵³ Այսինքն՝ Կրթական նախարարութենէ:

⁵⁴ 1914-ին՝ 28 ոսկի:

⁵⁵ Դպրոցի կառուցման նպատակով 1912 թուականին Կ. Պոլսոյ մէջ հիմնուած էր Յառաջդիմասիրաց ընկերութիւնը:

⁵⁶ Թէոդիկ տէր-հայրը ծնած կը համարի 1870-ին: Տ. Խոսրով 1915-ի ցեղասպանութեան նահատակներէն է:

⁵⁷ Այսինքն՝ քաղաքի այն բարձր խաւը, որ բռնութեամբ կը տիրէր այս կամ այն կալուածին եւն.:

Վերոգրեալ թուահամարով եկած պաշտօնական շրջաբերականին հարցումներուն պատասխանելով ճշտութիւնը կը հաստատենք:

Թաղական Խորհրդոյ

Անդամ Յովսէփ [անընթեռնելի բառ]

Ատենադպիր Մելքօն Գրիգորեան

Նախագահ Տէր Խոսրով քահանայ Գրիգորեան

Անդամ Մելքօն Շուշանեան

Ատենապետ Աբէլ Շուշանեան

Քաղաքիս Աշուշէն գիւղի Արժ. Տ. Խոսրով Քհնյ. Գրիգորեանի եւ Պատ. Թաղական Խորհրդի ստորագրութիւնները կը հաստատենք:

1913 մայիս 1

Տիվրիկ

Առաջնորդ. Փոխանորդ Տիվրիկոյ

Սերովբէ քհնյ. Բռիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

[Կասմա⁵⁸]

1. Գիւղիս հայ ժողովուրդը ներկայիս 89 տուն են, 30 տուն ալ այլուր գաղթած են, ներկայ ժողովրդեան թիւն է 152 արու եւ 251 էգ⁵⁹:

2. Կաթուղիկ եւ բողոքական չկան:

3. Գիւղիս թուրք բնակչութեան թիւն է մօտաւորապէս 70 տուն եւ 300 սակ արու եւ էգ խառն⁶⁰. չէրքէզ եւ քուրդ չ'կան:

4. Գիւղէն պանդխտած են 251 անձ, որոնցմէ Պոլիս կը գտնուին 125 արու եւ 42 էգ, Ամերիկայ 13 արու, Պուլկարիա 20 արու եւ 1 էգ, Եգիպտոս 3 արու, Ռուսիա 2 արու, Ռումանիա 3 արու եւ մէկ էգ, Կիրասոն 7 արու եւ 3 էգ, Զմիւռնիա 1 էգ եւ մէկ արու, Մարաշ 5 արու եւ 2 էգ, Ատանա 1 արու, Մալաթիա 1 արու եւ 1 էգ եւ 9 զինուոր որոնցմէ 3 Վան եւ 6 պատերազմի դաշտին:

5. Զորս կտոր Ազգ. կալուածներ ունինք, որոնցմէ մին փուռ, երկու խանութ եւ մէկ ալ պանդոկ, որոնց տարեկան հասոյթն է 500 դհ. Պետական տուրք կը վճարուի 80 դհ. եւ ամէնուն արժէքն է 3000 դհ.:

6. Ունինք մէկ եկեղեցի քարաշէն. շինուած է 1866 թուին⁶¹, անունն է Ս. Ածածին⁶²:

⁵⁸ Գիւղին ներկայիս անունն է Քեսմէ: Արձանագրուած է նաեւ Գասմա, Գասման, Կասմ, Կասման, Կեսմէ, Ղասմա եւն. ձեւերով: Կը գտնուի Տիվրիկէն 45 ֆմ հեռաւորութեան վրայ, դէպի հիւսիս-արեւելք: Գիւղը հայոց արդի պատմութեան մէջ յայտնի է որպէս Նորատունկեան բարեհամբաւ գերդաստանի հայրենիք: Կասմացիներ Կ. Պոլսոյ մէջ փոտեր կը բանեցնէին, ընդհանրապէս: Կասմայի տուները եղած են ձեւատու, ծառագարդ եւ ջրաւտ: Պոլսոյ Պալաթ թաղի Ս. Հրեշտակապետ եկեղեցոյ 1907-ի նորոգութիւնը իրականացած էր Կասմա գիւղացի Ստեփան Թելլիեանի նուիրատուութեամբ:

⁵⁹ Գէորգեան-Փապունեան նախաեղեռնեան տարիներուն գիւղին բնակչութեան թիւը կը նշեն իբր 580 անձ (100 տուն), մինչ տեղանուններու բառարանի համաձայն գիւղի բնակիչ հայոց թիւը 500 էր: «Եղեռնապատում»-ի տուեալներով բնակչութիւնը կը կազմէր 150 տուն, 1200 բնակչութեամբ: Մինչ «Բնաշխարհիկ բառարան»-ը հայերու համար կու տայ 500 թիւը (100 տուն): 1902-ի տեղեկագրին համաձայն, գիւղի բնակչութեան թիւն էր արու 324, կի՞ն՝ 310:

⁶⁰ «Բնաշխարհիկ բառարան»-ի համաձայն թուրքերու թիւը 200 (40 տուն) էր:

⁶¹ 1902-ի տեղեկագրին համաձայն վերանորոգուած է 1864-ին:

⁶² Կ. Պոլսոյ պատրիարքութեան 1912-1913-ին կազմած ցուցակին համաձայն, եկեղեցին կառուցման թուականն է 1910-1911, որ հաւանաբար պետական արտօնագրի ստացման թուականն ըլլալու է: Եկեղեցոյ շինարարութեան բարերարը եղած է Յակոբ Նորատունկեան:

7. Գիւղիս մօտերը Բագրատունի հին աւերակները կը գտնուին եւ հնաւուրց վանքեր թէեւ կան բայց աւերակ դառնած են⁶³, ոչ կալուած ունին եւ ոչ ալ հող, շրջակայ թուրքերէն գրաւուած են իրենց ունեցուածքները:

8. Ունինք մանչերու յատուկ մէկ վարժարան, կը կոչուի Ս. Լուսաւորչեան⁶⁴, երկյարկ եւ փայտաշէն, ունի երկու ուսուցիչներ, առաջինը բնիկ տիվրիկցի Պ. Արմենակ [անընթեռնելի]եան, շրջանաւարտ նոր քաղաքի Ազգ. վարժարանէն ուսուցչական եւ շրջանաւարտի վկայականներ ունի. թօշակ կ'ստանայ երեք ոսկի⁶⁵, իսկ օգնական ուսուցիչը Պ. Տօնապետ Կիւլմէզեան շրջանաւարտ գիւղիս վարժարանէն թօշակ կ'ստանայ 50 դհ. վարժարանը պետական արտօնագիր չ'ունի. ունի 60 մանչ աշակերտներ⁶⁶:

9. Գիւղս աղջկանց վարժարան չունի:

10. Գիւղիս քահանան է Տ. Մովսէս Ծոցիկեան⁶⁷, 1898 նոյեմբեր 1 թուին ձեռնադրուած Նիկոմիդիա քաղաքի Օվաճըք գիւղի Ս. Ածածնայ եկեղեցւոյ մէջ Ստեփանոս Արքեպս. Յովակիմեանէ⁶⁸. Նախկին անունը Աբրահամ Տօնիկ Ծոցիկեան, 46-47 տարեկան այժմ:

11. Վերջին եռեսուն տարուայ ընթացքին գիւղէս չորս անձինք իսլամացած են, որոնցմէ [մին] արու որ Պոլիս կը գտնուի, եւ երեքը էգ. որոնցմէ մին գիւղիս մէջ թուրքի մը հետ ամուսնացած է. մին Տիվրիկիի ըէթի միւտիւրիին⁶⁹ քով կը գտնուի եւ միւսն ալ Գանկալի⁷⁰ գիւղերը կը գտնուի:

12. Վարժարանի տարեկան պիւտճէն կը մատակարարուի ժողովրդեան տուրքով եւ հանգանակութեամբ:

25 ապրիլ 1913

Կասմայ

Թաղականութիւն Կասմայ գիւղի

Անդամ Ռուբէն Գ. Պալեան

Ատենադպիր Տիգրան Յ. Կարապետեան

Նախագահ Մովսէս Քհնյ. Ծոցիկեան

Անդամ Ասատուր Խ. Հալաճեան

Ատենապետ Ստեփան Պ. Բէյիսեան

⁶³ 1902-ի տեղեկագրին համաձայն, գիւղի մօտակայ խոնարհած սրբատեղիներու անուններն էին՝ Ս. Փրկիչ, Ս. Թորոս, Ս. Կարապետ, Ս. Եղիա, Ս. Գրիգոր, Ս. Թաղէոս, Ս. Բարթող, Ս. Աստուածածին, Ս. Յակոբ, Ս. Գէորգ եւ Ս. Համբարձում:

⁶⁴ Էփրիկեանի համաձայն, վարժարանի անունը եղած է Մեսրոպեան՝ 50 աշակերտով:

⁶⁵ Այսինքն՝ օսմանեան լիրա:

⁶⁶ Գիւղի դպրոցին օժանդակելու նպատակով 1909-ին Կ. Պոլսոյ մէջ հիմնուած էր Բագրատունեաց դպրոցասէր ընկերութիւնը, որ 1919-ին կը վերակազմուի Բագրատունեաց միութիւն անունով: Նախապէս 1884-1885 թուականներուն նոյն նպատակով հիմնուած էր Դպրոցասիրաց ընկերութիւնը:

⁶⁷ Բուն մականունը՝ Փիլիկեան: Ծնած էր 29 յուլիս 1866-ին: Ամուսնացած չ'էր, տարուելու պահուն թոյն խմելով ինքնասպան կը դառնայ՝ խուսափելու համար եռեղնագործներու ձեռքէն:

⁶⁸ Ծնած է 1846-ին, Նիկոմիդիա, Տաղ կամ Քերէմէք գիւղը: Ասագանի անունով Մելգոն-Սուրէն, 1873-ին կը ձեռնադրուի կուսակցութեան, Ներսէս Վարժապետեանէ: Երկու տարիներ վարած է Նիկոմիդիոյ թեմի առաջնորդի պաշտօնը: Հետագային անցած է Պոլկարիա, ուր ալ Սոֆիա մայրաքաղաքի մէջ կնքած է իր մահկանացուն, 1934-ին:

⁶⁹ Այսինքն՝ ծխախոտի վարչութեան տնօրէնին:

⁷⁰ Սեբաստիոյ նահանգի հայաշատ գաւառակներէն մին, որ կը գտնուէր Տիվրիկէն դէպի արեւմուտք, շուրջ 90 քմ. հեռավորութեամբ:

Քաղաքիս Կասմա գիւղի Արժ. Տ. Մովսէս Քհնյ, Ծոցիկեանի եւ Պատ. Թաղական խորհրդոյ ստորագրութիւնները կը հաստատեմ:

1913 Մայիս 3
Տիվրիկ

Առաջնորդ, Փոխանորդ Տիվրիկոյ
Սերովբէ Քհնյ, Բռիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

* * *

[Բարդամ⁷¹]

1596 համարաւ 28 Մարտ 1913 թուով մեզ ուղղեալ հարցումներուն ի ստորեւ կը պատասխանենք.

1. Գիւղս քառասուն եւ չորս տուներէ կը բաղկանայ եւ չորս հարիւրի չափ բնակչութիւն ունի. որոնց երկու հարիւր քսանուհինգը այր եւ հարիւր եօթանասուն եւ հինգը էգ են⁷²:

2. Գիւղիս մէջ կաթուղի եւ բողոքական հասարակութիւններ չիկան:

3. Զիկան նաեւ գիւղս Թուրք, Քիւրտ եւ Զէրքէս ազգութիւններ:

4. Գիւղէս իննսուն անձինք պանդխտացած են որոնց տասը հատը Պոլիս եւ Պուլկարիա են իսկ մնացեալներն Ամերիկայի զանազան կողմերն են⁷³:

5. Գիւղս ազգային անշարժ որեւէ կալուած չունի:

6. Մէկ եկեղեցի ունինք. քարուկիր շէնք է, 1833ին կառուցուած Ս. Աստուածածին անուամբ⁷⁴. արտօնագիրն ալ՝ աւարին կորսուած է:

7. Գիւղէս ժամ մի հեռաւորութեամբ Գարա Քիլիսէ եւ Ս. Վառվառիա փոքրիկ մատուռները կան որոնք Գարասար կոչուած թուրք գիւղին կը պատկանին:

8. Գիւղիս վարժարանը անուն չունի⁷⁵, ուսուցիչ մը ունի. Ստեփան Գոչեան բնիկ խուռնավիցի, տեղւոյն վարժարանէն ելած է. տասնեութը ոսկի թօշակ կ'ստանայ. քառասունեւերկու աշակերտներ կը դաստիարակուին. երկյարկանի է վարժարանը. 1912ին շինուած առանց արտօնագրի:

9. Աղջկանց յատուկ վարժարան չունինք եւ ոչ ուսուցչուհի 12ի չափ աղջկունք տղայոց վարժարանը կը յաճախեն:

⁷¹ Ներկայիս Ուզունֆայա անունը ունեցող գիւղը կարգ մը աղբիւրներու մէջ կը նշուի Բարզամ ձեւով եւս: Գիւղը կը գտնուի Տիվրիկէն 21 քմ. հեռաւորութեան վրայ, դէպի հարաւ-արեւմուտ: Տիվրիկի գիւղերու մէջ ունէր ամենաբարձր դիրքը: Յայտնի էր իր մաքուր օդով ու ջիւնջ ջուրերով:

⁷² Գէորգեան-Փապունեան 510 անձ բնակչութիւն նշած են, իսկ Թէոդիկի տուեալները ցոյց կու տան 450 անձ (44 տուն): Ըստ «Նդեռնապատում»ի գիւղը ունեցած է 480 անձ (60 տուն), իսկ Սեբաստիոյ պատմագիրքը կ'ըսէ, թէ գիւղը ունեցած է 500 հայ բնակչութիւն (30 տուն): Տեղանուններու բառարանի համաձայն ալ գիւղը ունէր 500 բնակիչ (60 տուն): 1902-ի տեղեկագրին համաձայն, գիւղը ունէր 150 այր, 159 կին բնակիչ:

⁷³ Պանդուխտները կ'օժանդակէին գիւղի դպրոցին: Բնակիչները սկսած էին աղատութենէ ազատիլ՝ պանդխտութեան շնորհիւ:

⁷⁴ Այս տեղեկութիւնը կը համապատասխանէ նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքութեան կազմած եւ 1912-1913-ին օսմանեան կառավարութեան յղած ցուցակին:

⁷⁵ Ըստ 1901-ի տեղեկագրին գիւղին վարժարանը փակ էր: Իսկ 1902-ի տեղեկագրին համաձայն, գիւղի եկեղեցոյ յարակից ազգային վարժարանը ունէր 40 տղայ, 5 աղջիկ աշակերտ եւ ուսուցիչ մը:

10. Գիւղիս քահանան է Տ. Գէորգ Աբգարեան⁷⁶ 1881 թուին հարբերթ ձեռնադրուած Յակոբոս եպիսկոպոս Ճգնաւորեանէ⁷⁷, նախկին անունը Եղիա եւ տարիքն ալ յիսուն է:

11. Գիւղէս մէկ անձ միայն իսլամացած է Անդրէաս Ղուկասեան, ներկայիս Ալի Րիզա կոչուած Տիվրիկի կը բնակի եւ ողջ է:

12. Գիւղիս վարժարանը աշակերտաց թոշակներով կը մատակարարուի, այսինքն օժանդակող մը չունի:

Վերոյգրեալ պատասխաններու ճշտութիւնը կը հաստատեմք:

Ի դիմաց թաղականութեան Բարդամ գիւղի

Անդամ Մարկոս Աբգարեան [կնքած է՝ Մարկոս 1911]

Անդամ Մարտիրոս Ղուկասեան Ատենադպիր Յարութիւն [անընթեռնելի]

Ատենապետ Տոնիկ Յարութիւնեան [կնքած է՝ Յարութ Տոնիկ]

Նախագահ Գէորգ Քհնյ, Աբգարեան

25 Ապրիլ 1913

Քաղաքիս Բարդամ գիւղի Արժ. Տ. Գէորգ Քհնյ, Աբգարեանի եւ Պատ. Թաղ. Խորհրդոյ կնիք եւ ստորագրութիւնները կը հաստատեմ:

1913 Ապրիլ 29

Տիվրիկ

Առաջնորդ, Փոխանորդ

Սերովբէ Քհնյ, Բռիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց Ի Տիվրիկ, 1886]

* * *

Արմութաղ գիւղ⁷⁸

1. Գիւղիս ժողովուրդը 80 տունէ կը բաղկանայ, 600 բնակիչ, 250 արու եւ 350 էգ⁷⁹:

2. Գիւղիս մէջ կաթողիկ եւ բողոքական չի կայ:

3. Գիւղիս մէջ ոչ թուրք, ոչ չէրքէզ եւ ոչ ալ քիւրտ կայ:

4. Մեր գիւղէն պանդուխտներ կան Ամերիկայի խորքը, Պոլիս եւ Պուլկարիա Ռումանիա եւ Եգիպտոս 100 անձ:

5. Ազգ. անշարժ կալուածնիս է չորս կտոր արտ եւ մի տուն, որուն 22 զրշ. տուրք

⁷⁶ Տէր-հայրը Մեծ Եղեռնի ընթացքին նահատակուած է:

⁷⁷ Ծնած է Եղեռնի, ուր 1864-1880 թուականներուն վարած է առաջնորդական պաշտօն: Նախապէս եղած էր տեղւոյն Ա. Աննա վանքի վանահայր: 1880-1887 թուականներուն կը դառնայ հարբերթի առաջնորդ:

⁷⁸ Տարբեր աղբիւրներու մէջ բնակավայրի անունը արձանագրուած է նաեւ որպէս Արմթաղ, Արմըթաղ, Արամուրթաղ, Արմտան, նոյնիսկ՝ Տաննիկ: Ներկայիս անունն է Քավաֆլըսու: Կը գտնուի Տիվրիկէն 21 քմ. հեռավորութեան վրայ, հարաւ-արեւմտեան ուղղութեամբ:

⁷⁹ Գէորգեան-Փապունեան գիւղին բնակչութեան թիւը կը հասցնէ 1605-ի, իսկ Թէոդիկ կու տայ 620 թիւը (76 տուն, Մեծ Եղեռնէն վերապրած են 32-ը միայն): Սեբաստիոյ պատմագիրքը բնակչութեան թիւը կը սահմանէ 150-200 տունով, իսկ Գաբիկեան կու տայ 560 թիւը (70 տուն): 1902 թուակիր տեղեկագրին համաձայն, գիւղը ունէր 280 այր եւ 320 կին բնակիչ: Ժողովուրդի զլխատը զբաղումը եղած է երկրագործութիւնը:

կու տանք, իրենց արժեքն է 1300 ղրշ, ասոնցմէ զատ կային երկու կտոր արտ որ բռնապետութեան շրջանին⁸⁰ մէջ գրաւուած են, մին խօշլամ անունով 200 ոսկի արժեքով գրաւուած Վարդան թուրք գիւղի կողմէ, իսկ միւսը Քէօռ-Կէօզ կամ Ղամիշ Կէօլի անունով 80 ոսկի արժողութեամբ գրաւուած Բաղդիար թուրք գիւղի⁸¹ կողմէ:

6. Մէկ եկեղեցի ունինք փայտաշէն Ս. Գեորգ անունով, 1831ին շինուած⁸², 1896ին ընդհանուր կտտորածի ժամանակ քայքայուած թուրք խուժանի կողմէ եւ նորոգուած 1900ին:

7. Գիւղիս մէջ ունինք Ս. Թորոս, Ս. Կարապետ եւ Ս. Փրկիչ աւերակ մատուռները, իսկ մէկ ժամ հեռաւորութեամբ Ս. Լոյս մատուռը, թուրքերու հողի մէջ⁸³:

8. Գիւղիս մանչերու վարժարանի անունը Ս. Փրկիչ է⁸⁴. 70 մանչ. դասատուն է Տիվրիկցի Միհրան էֆ. Սարաֆեան, Տիվրիկոյ Ս. Ներսէսեան վարժարանէ շրջանաւարտ. թոշակ կ'ստանայ տարեկան 25 ոսկի: Դպրոցը փայտաշէն է. 1896ին քայքայուած եւ 1910ին նորոգուած. պետական արտօնագիր չ'ունի, միայն միսաֆիրխանէի⁸⁵ անունով շինուած եւ որուն 24 ղրշ. էմլաք⁸⁶ կու տանք:

9. Գիւղիս աղջկանց վարժարանը մանչերու հետ խառն է, ուսուցչուհին է տիվրիկցի տիկին Միհրան Արշալոյս Սարաֆեան, թոշակ կ'ստանայ 10 ոսկի: Սովորած է Տիվրիկ: Աշակերտուհիներուն թիւն է 15:

10. Մեր գիւղի քահանան է Տ. Եզնակ Յակոբեան, ձեռնադրուած՝ Թոգաթ, Պետրոս Եպսկ. Թահմիզճեանէ⁸⁷, 1898 հոկտ. 12ին, նախկին անունը Աւագ է: Այժմ 50 տարեկան է:

11. Մեր գիւղէն մինչեւ հիմա իսլամացուած անձ չի կայ:

12. Դպրոցական ծախսերը կը հոգանք տեղական միջոցներով եւ հանգանակութեամբ:

Վերոյիշեալներու ճշդութիւնը կը հաստատենք:

Թաղական Խորհուրդ Արմութաղ գիւղի

Անդամ [անուն-մականունը անընթեռնելի]

Անդամ Պաղտասար [մականունը անընթեռնելի]

Ատենադպիր Յակոբ [մականունը անընթեռնելի]

Ատենապետ Համբարձում [մականունը անընթեռնելի]

Նախագահ Եզնակ Քհնյ. Յակոբեան

1913 Ապրիլ 25

Արմութաղ

⁸⁰ Նկատի ունի նախասահմանադրական, 1908-էն առաջուան համիտեան բռնապետութեան ժամանակաշրջանը:

⁸¹ Այս գիւղը կը գտնուի Արմութաղէն երկու ֆմ. դէպի արեւմուտք:

⁸² 1902-ի տեղեկագրին համաձայն, եկեղեցին գոյութիւն ունեցած է անյիշելի ժամանակներէ ի վեր, սակայն որպէս վերանորոգութեան թուական նշուած է 1831-ը, իսկ հայկական թուականով ալ ՌՄՁԹ, որ կը համապատասխանէ 1840-ի: Իսկ 1912-ի ցուցակն ալ որպէս եկեղեցոյ շինութեան թուական դրած է 1893-1894-ը:

⁸³ Բացի յիշեալներէ, 1902-ի տեղեկագրին մէջ նշուած է նաեւ Ս. Յովհանն, որպէս շաբաթացած աղօթավայր:

⁸⁴ Ըստ 1901-ի վիճակացոյցին, վարժարանի անունը եղած է Ս. Գեորգեան: Դպրոցը նորոգուած է 1885-ին: 1901-ին ունէր երկու դասարան եւ 45 աշակերտ, իսկ 1902-ին՝ 40 աշակերտ: 1920-ականներուն Միացեալ Նահանգներու մէջ կար Ս. Փրկիչ վարժարանի ուսումնասիրաց միութիւնը:

⁸⁵ Հիւրատուն (թրֆ.):

⁸⁶ Կալուածատուրֆ (թրֆ.):

⁸⁷ Պէտք է Թահմիզեան ըլլայ:

Քաղաքիս Արմուժաղ գիւղի Արժ. Տ. Եզնակ Քահնյ. Յակոբեանի եւ Պատ. Թաղ. Խորհրդոյ ստորագրութիւնները կը հաստատեմ:

1913 Սպրիլ 26
Տիվրիկ

Առաջնորդ. Փոխանորդ Տիվրիկոյ
Սերովբէ Քհնյ. Բռիկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

[Ս. Յակոբ⁸⁸]

Թաղ. Խորհրդարան
Տիվրիկի - Ս. Յակոբ

25 ապրիլ 913 Ս. Յակոբ

[փակագծի մէջ ձեռագրով աւելցուած՝] (Գեղին անունն է)

Սեփաստիոյ Առաջնորդարանին ... համարաւր պաշտօնական շրջաբերական հրահանգին համաձայն նիստ գումարելով եղած հարցումներուն ստորեւ կը պատասխանենք.

1. Գիւղը կը բաղկանայ 13 տուներէ, եւ ութսուն եւ չորս բնակիչներէ որոնց 43ը արու եւ 41ը էգ⁸⁹:

2.-3. Կաթուղիկ, բողոքական, թուրք, քիւրդ եւ չէրքէզներ չկան:

4. 18 հատ պանդուխտներ ունինք, որոնցմէ 3ը Ամերիկա, 6ը Պուլկարիա, 1ը Եգիպտոս եւ 8ը Պոլիս են:

5. Ազգային կալուած չունինք⁹⁰:

6. Ունինք երկու եկեղեցի մօտաւորապէս 800 տարի առաջ շինուած երկուքն⁹¹ ալ քարաշէն, մին Ս. Յակոբ եւ միւսը Ս. Յովհաննէս Աւետարանիչ, որ այժմ աւերակ է:

7. Վանքեր չունինք⁹²:

8. Վարժարանի յատուկ շէնք չունինք, թէեւ պէտքն զգալի է, եկեղեցւոյ մէկ սենեակը յատկացուցած ենք նոյն նպատակին որ յարմարութիւն ալ չունի դպրոցի⁹³: Ունի 20

⁸⁸ Ներկայիս Աֆալը անունով գիւղակ մըն է, որ վարչականօրէն կապուած է Քայապուրունի (անցեալին՝ Օտու): Անցեալին կոչուած է Եալնըգէշիշ (միայնակ ճգնաւոր), որովհետեւ անդ գտնուող Ս. Յակոբ վանքի վանահայրութիւնը երկար տարիներ վարած է Բահանայ մը, իր ընտանիքով: Տիվրիկէն դէպի հարաւ-արեւմուտք է, հետիոտըն գրեթէ երեք ժամ հեռաւորութեամբ:

⁸⁹ Գէորգեան-Փապունեանի համաձայն գիւղը բնակչութեան թիւը 290 էր, ըստ Թէոդիկի ալ՝ 114, որոնցմէ միայն երկուքը վերապրած էր Մեծ Եղեռնը: «Եղեռնապատում»ի համաձայն բնակչութեան թիւը կը հասնէր 560-ի (70 տուն): 1902-ի տեղեկագրին համաձայն, բնակչութիւնը կը բաղկանար 52 այրէ եւ 56 կինէ:

⁹⁰ «Հողդար»ի յօդուածագիրը կը նշէ, որ ազգապատկան կալուածներու արձանագրութեան ժամանակ, պաշտօնեաներուն ցոյց տրուած է անջրդի երկու արտ միայն, մինչդէռ Տիվրիկի կալուածոց կտակներուն մէջ կը տեսնուին ծանօթ անձերու կողմէ վանքին նուիրուած շատ մը հողեր, որոնք ժամանակի ընթացքին գրաւուած են:

⁹¹ 1902-ի տեղեկագրին մէջ նշուած է նաեւ Ս. Կարապետ անուամբ կիսաւեր մատուռի մը գոյութեան մասին:

⁹² Ս. Յակոբը վանք մըն էր ինքնին, որ կառուցուած էր անյիշելի ժամանակի մը: Յայտնի ուխտավայր էր, ուր հաւատացեալներ կը փութային յատկապէս Ս. Յակոբ Մծբնայ հայրապետի տօնին: Վանքը շրջան մը եղած է նաեւ Տիվրիկի առաջնորդանիստը: 1868-էն սկսեալ կալուածը գրաւուած է վերոյիշեալ վանահայր Բահանայի սերունդներուն կողմէ, մաս մըն ալ թուրքեր առած են:

⁹³ Ըստ «Հողդար»ի, վանքի գետնափոր սենեակներէն մէկը կը գործածուէր որպէս դպրոց:

աշակերտներ, ուսուցիչն է Օտոու գիւղի բնիկներէն Պ. Տիրան Աշոտեան, հայրենի գիւղին վարժարանէն ընթացաւարտ, տարեթոշակը 300 դահեկան է:

9. Աղջկանց վարժարան չունինք:

10. Քահանանիս Տէր Մերկէն Մարկոսեան⁹⁴ 38 տարի առաջ Տիվրիկ՝ Տիգրանակերտ-ցի Մկրտիչ Եպիսկոպոսէն⁹⁵ ձեռնադրուած, այժմ 75 տարեկան է: Նախկին անունն ալ Մերկէն եղած է:

11. Վերջին 30 տարուայ ընթացքին իսլամացող չենք ունեցած:

12. Դպրոցի ծախքը կը հոգացուի ուսանողներու խեղճուկ թոշակներովը ինչպէս կը տեսնուի վարժարանին օգնութեան կը կարօտի որովհետեւ թէ՛ հասոյթ չունի եւ թէ՛ ժողովուրդը անկարող է սատարել:

Պաշտօնական շրջաբերականին հարցումներուն մի առ մի պատասխանելով ճշդութիւնը կը հաստատենք:

Թաղ. Խորհրդոյ

Անդամ Մեսրոպ Տէր Մեսրոպեան Անդամ Սարգիս Նազարէթեան
Ատենադպիր Գիգոր Մատթէոսեան Ատենապետ Համբարձում Պաղտիկեան

Նախագահ Տ. Մերկէն Քհնյ. Մարկոսեան

Քաղաքիս Ս. Յակոբ գիւղի Արժ. Տ. Մերկէն Քհնյ. Մարկոսեանի եւ Թաղ. Խորհրդոյ ստորագրութիւնը կը հաստատեմ:

1913 ապրիլ 27

Տիվրիկ

Առաջ. Փոխանորդ Տիվրիկոյ

Սերովբէ Քհնյ. Բռիկեան

[Կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

* * *

[Մովանայ⁹⁶]

1. Գիւղիս բնակչութիւնն է 27 քսանեւեօթը տուն, որոնց 70 եօթանասունը արու եւ 65 վաթսունը հինգը էգ. համագումար 135⁹⁷:

2. Գիւղիս մէջ բողոքական եւ կաթօլիկ չիկայ:

⁹⁴ Թէոդիկ զինք արձանագրած է որպէս Մերկերիոս Քհնյ. Մինասեան: Ըստ իրեն, Մեծ Եղեռնի նահատակ հոգեւորականը 1915-ին 70 տարեկան էր:

⁹⁵ Մկրտիչ Եպս. Տիգրանեան, ծանօթ Հրաշագործ կոչմամբ, ծնած է 1815-ին, Տիգրանակերտ: 1834-ին կուսակրօն հոգեւորական կը ձեռնադրուի Մուշի Ս. Կարապետ վանք, իսկ Եպիսկոպոս՝ 1867-ին: Հեղինակ բազմաթիւ աշխատութիւններու: Քրտերէնի թարգմանած է Աւետարանը: Վախճանած է Տիգրանակերտ: Ան մէկն է Պարոնեանի «Ազգային ջոշեր»էն:

⁹⁶ Միւրվանայ, Մրուանայ, Մուրվանայ, Մովանես, Մրունայ ձեւերով ալ յայտնի գիւղը այսօր կը կոչուի Քայանք, որ կը գտնուի Տիվրիկէն 9 ֆմ. հեռու, դէպի հիւսիս:

⁹⁷ Ըստ Թէոդիկի գիւղի բնակչութեան թիւն էր 210 անձ (30 տուն), որոնց երկուքը միայն վերապրած էր Մեծ Եղեռնը: Գաբիկեանի համաձայն, գիւղը ունէր 320 բնակիչ (40 տուն): Տեղանուններու բառարանը եւս կու տայ 40 տուն բնակչութիւն: Դեկտեմբեր 1898 թուակիր, Կ. Պոլսոյ հայոց պատրիարքարան ուղարկուած նամակէ մը, զոր Գ. Բամպոմբեան հրատարակած է Տիվրիկի պատմագիրքին մէջ, կը տեղեկանանք, որ գիւղին բնակչութիւնը կը բաղկանար 33 տունէ եւ խիստ կարօտ վիճակի մը մէջ էր: Իսկ 1902-ի տեղեկագրին համաձայն, գիւղին բնակչութեան թիւն էր՝ 70 այր եւ 78 կին:

3. Գիւղիս մէջ 19 տասնըրիւնը տուն⁹⁸ թուրք (ալիական) բնակչութիւն կայ 137 հարուր երեսունը եւ եօթը արու եւ էգ:

4. Գիւղէս 46 քառասունը եւ վեց անցեր պանդուխտացած էն որոնցմէ 31ը Պոլիս 4ը Ամերիկա, իսկ 11ը Վառնա:

5. Գիւղս էրկու կտոր Ազգային կալուած արտ ունի երկու հարուր ղուրուշ արժողութեամբ տարեկան կառավարական տուրքն է երկու ղուրուշ, եւ երկու տարին մի անգամ վարձու տրուելով երկու [անհասկնալի բառ՝ շնի՞կ] ցորեն վարձ կ'առնուի:

6. Գիւղիս մէջ մէկ քարաշէն եկեղեցի կը գտնուի յանուն Սբ. Ած.ածնայ եւ 1843 թիւին շնուած⁹⁹:

7. Գիւղիս շրջական կը գտնուի Սբ. Ստեփաննոս անուամբ քարաշէն մի մատուռ կալուած շունի, գիւղիս եւ շրջականերէն ուխտագնացութիւն կ'ըլլայ:

8. Գիւղս ունի մի փայտաշէն վարժարան մանչերու, Ներսէսեան¹⁰⁰ անուամբ, առայժմ փակ է. 1873ին կառուցուած, պետական արտօնագիր շունի¹⁰¹:

9. Գիւղս աղջկանց վարժարան ունեցած չէ եւ առայժմ չունի:

10. Գիւղիս քահանան է Տէր Մամբրէ Քհնյ. Տէր Օհաննէսեան, ձեռնադրուած 1894 թիւին Կեսարիոյ Ստեփաննոս Արքեպիսկոպոսէ¹⁰², նախկին անուն է Սահակ, աժմ տարիքն է 60 վաթսուն:

11. Գիւղիս մէջ վերջին երեսուն տարուան մէջ կրօնափոխութիւն չէ պատահած:

12. Գիւղիս վարժարանին ծախքը հինգ տարի առաջ պատիրարքարանի նպաստով կը կառավարուէր սակայն աժմ տեղական ազգայիններուն թոշակով կը կառավարուի:

Նէրկայ տեղեկագիրը Տիվրիկոյ պատկ. Քաղ. Ժողովոյ պատ. անդամներու Տիէար Համբարձում Պոչոյեան եւ Տիար Սողոմոն Քէլիկեանի ներկայութեամբ եւ խորհրդակցութեամբ պատրաստուած ըլլալով անոր ճշտութեանը հետ Ազգային առաջնորդարանէ ներկայացուած 2 Մայիս 1913 թիւ եւ 121 / 347 թիւահամար հարցարանի համապատասխանի ըլլալը կը հաստատեմք:

5 Մայիս 913

Մրվանայ

Ի դիմաց թաղ. Խորհրդոյ Մրվանայ գիւղի

Անդամ Խաչատուր Սմբատեան [կնքած է՝ Խաչուկ 1912]

Ատենադպիր Պարսամ Տէր Օհաննէսեան

Ատենապետ Մանուկ Ախիկեան [կնքած է՝ Մանուկ Գիրգոր 1897]

Նախագահ Մամբրէ Քահանայ Տ. Յօհաննէսեան [կնքած է՝ Տէր Մամփրէ 1894]

⁹⁸ Ըստ Թէոդիկի այս թիւը 24 տուն է:

⁹⁹ 1902-ի տեղեկագրին համաձայն, եկեղեցին վերանորոգուած է 1834-ին: Իսկ 1912-ի ցուցակին համաձայն, շինութեան թուականը նոյնպէս 1843-1844 է:

¹⁰⁰ Տիվրիկի վիճակի վարժարաններու մասին պատրաստուած 1900 թուակիր վիճակացոյցի մը համաձայն, այդ թուականին փակեալ վարժարանին անունը եղած է Ս. Աստուածածին:

¹⁰¹ Մրվանայ գիւղի պոլսաբնակ ազգայինները 1910-ին կազմած են կրթասիրաց ընկերութիւն մը՝ իրենց գիւղի վարժարանին օգնելու համար: 1902-ի տեղեկագրին համաձայն, աշակերտութիւնը կը բաղկանար 20 տղայէ եւ 8 աղջիկէ: Կար ուսուցիչ մը:

¹⁰² Հասանաբար խօսքը կը վերաբերի Կեսարիոյ թեմին ենթակայ Ս. Դանիէլի եպիսկոպոսութեան, որու 1885-1910 թուականներու միջեւ արքեպիսկոպոս էր Ստեփաննոս եպսկ. Սանտալեւեան Պրուսացի: Ծնած էր 1836-ին: Կուսակրօն փահանայ ձեռնադրուած էր 1861-ին, եպիսկոպոս՝ 1868-ին: Միաբան Մայր Աթոռի:

Քաղաքիս Մրվանա գիւղի Արժ. Տ. Մամբրէ Քհնյ. Տ. Յովհաննէսեանի եւ Պատ. Թաղական Խորհրդոյ ստորագրութիւնները կը վաւերացնենք:

1913 Մայիս 7
Տիվրիկ

Առաջնորդ. Փոխանորդ
Սերովբէ Քհնյ. Բոխկեան

[կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

* * *

Զիմառա¹⁰³ Գիւղ

Զիմարա¹⁰⁴ Գիւղիս մէջ կայ 120 տուն զուտ եւ միայն լուսաւորչական, որուն բնակչութիւնն է 675, եւ որուն 347-ը արու է, 325-ը էգ¹⁰⁵:

Պանդխտութեան մէջ ունինք 143 անձեր, որոնց 123-ը արու են եւ 30-ը էգ: Անոնք կը գտնուին

-95 արու եւ 14 էգ	Պոլիս ¹⁰⁶
-20 արու եւ 10 էգ	Ամերիկա
-8 արու եւ 6 էգ	Ռօմանիա
-11 արու զօրք - երկրիս զանազան կողմերը:	

Ոչ չէրքէզ կայ եւ ոչ ալ Քուրդ, միայն Թուրք 26 տուն կայ¹⁰⁷, որուն բնակչութիւնն է 113: Մեր գիւղը չունի ոչ ալ ինչ ազգապատկան կալուած բայց միայն մէկ ջրաղացք՝ տինկով եւ մէկ փոքր պարտէզով որ զարդարուած է 10-15 խոշոր թթերով: Ունինք 100 լծվարէ աւելի ազգապատկան արտեր, որոնց 20 լծվարը միայն կը շահագործենք իսկ մնացեալը խոպանացած է մեր անկարողութեան բերմամբ: Զաղացքը կանոնաւոր եղած ժամանակ 5-6 գրիւ ցորեն հասոյթ կը բերէ, իսկ ֆրունը¹⁰⁸ 1000 ղրշ. տարեկան: Յիշեալ կալուածներու արքունական տուրք կու տանք 55 ղրշ. ֆրունին, 92 ղրշ. ջրաղացքին եւ 22 ղրշ. արտերուն:

Ասոնց արդի արժէքներն են՝ 80 օսմանեան լիրայ ջրաղացքը, 40 ֆրունը եւ 100 ալ արտերը: Ունինք մէկ եկեղեցի քարուկիր եւ կամարաշէն: Անունն է Ս. Երրորդութիւն: Հիմնադրուած է 1873-ին, իսկ նախկին անունն էր Ս. Քրիստափոր¹⁰⁹:

¹⁰³ Ծննդավայր՝ Երուսաղէմի (1749-51) ու Կ. Պոլսոյ (1741-46, 1752-64) Յակոբ Նալեան պատրիարքի, որ եղած է Յովհաննէս Կոլոտ պատրիարքի ձեռնասունը: Հոս ծնած է նաեւ անուանի հրապարակագիր, Փարիզի «Յառաջ» թերթի խմբագիր Շաւարշ Միսաքեան: Պատկանեան գերդաստանն ալ սերած է հոսկէ: Գիւղիս այժմու անունն է Ալթընթաշ եւ կը գտնուի Էրզինճան (Երզնկայ) քաղաքի վարչական տարածքին: Տիվրիկէն դէպի հիւսիս-արեւելք, շուրջ 28 քմ. հեռու է: Ծանօթ է նաեւ Զեմարէ, Զիւմա, Զիմառ, Զումարա եւն. անուններով:

¹⁰⁴ Սփիւտահայ արձակագիր Յակոբ Մնձուրի Զիմառայի մասին ունի երկու պատմումով. «Զիմառու Աստուած վար եկուր» («Կապոյտ լոյս», Ստանպոլ, 1958, էջ 287-291) եւ «Զիմառցիները» («Կոունկ ուստի» կու գաս», Ստանպոլ, 1974, էջ 95-101):

¹⁰⁵ Էփրիկեանի եւ «Տեղանունների» բառարանի համաձայն հայ բնակչութեան թիւն էր 70 տուն: Գաբրիէան հայ բնակչութեան համար կու տայ 1200 թիւը (150 տուն), իսկ Գեորգեան-Փապունեան կը դնէ 1250 հայ: Թէոդիկ կու տայ միայն 9-ը տուն հայութիւն: Սեբաստիոյ պատմագիրքին համաձայն հայութիւնը ունէր 100-110 տուն բնակչութիւն: 1902-ի տեղեկագրին համաձայն գիւղը 307 այր եւ 282 կին բնակիչ ունէր: Գամէր ալ իր ուղեւորութեան ընթացքին հանդիպած է հոս եւ տեսած՝ 95 տուն հայութիւն:

¹⁰⁶ Պոլսոյ բնակիչ զիմառացիները առհասարակ փռապան ու հացագործ էին:

¹⁰⁷ Թէոդիկի, Էփրիկեանի եւ «Տեղանունների» բառարանի համաձայն կար 30 տուն թուրք:

¹⁰⁸ Այսինքն՝ փուրը (թրֆ.):

¹⁰⁹ Եկեղեցին, որ նախապէս կը կոչուէր Ս. Քրիստափոր, հաստատուած է անյիշելի ժամանակներուն եւ նորոգ-

Մօտերնիս շէն վանք չունինք, իսկ աւերակ շատ, օրինակ, գիւղիս արեւելեան կողմը կէս ժամ հեռաւորութեամբ կը գտնուի Վերիվանք անուն ս. տեղը որուն անունն է Ս. Նիկողոս, անկից վարը Ներքվանք, անունն է Պօղոս Պետրոս:

Վերջինին մէջ մատուռներ կան: Ունինք հին եկեղեցիներ ու սրբավայրեր որոնք աւերակ են թէեւ՝ բայց մենէ կը յարգուին ստորեւ գրեալ անուններով. Սր. Քառասուն Մանուկ, Ս. Գէորգ, Ս. Յարութիւն, Ս. Երեք Մանուկ, Ած.ամայր եւ շատ մնալ ուխտատեղիներ, որոնց քանակը գրեթէ 30-ի կը հասնի¹¹⁰:

Հիմայ հոգեւոր պաշտօնեայ չունինք, ունէինք՝ բայց երեք տարի առաջ լքեց ու Քարբերդ գնաց, որ կ'անուանուէր Վարդան Քհնյ. Արսլանեան (Բինկացի) եւ որ 15 տարիներ առաջ մեր եկեղեցիին անունին տակ ձեռնադրեցինք Թոգադ Պետրոս Եպիսկոպոսի ձեռօք (Թահմիզեան), տարիքն է այժմ 50-ի մօտ եւ անունն ալ նախկինը չէ փոխւած¹¹¹: Գիւղիս վարժարանը կը կոչուի Նալեան Ազգ. Վրժր., ուսուցիչն է Մկրտիչ Հֆ. Պարսամեան (Բինկացի), վկայական չունի, վասնզի ինքնազարգացմամբ առաջ եկած է, ամսաթոշակն է 200 ղրուշ:

Դպրոցնիս երկյարկանի եւ փայտաշէն է, 30 տարիներ առաջ հիմնուած է¹¹², ունի 50 մանչ աշակերտներ¹¹³, պետական արտօնագիր չունի:

Ասկից 6-7 ամիսներ առաջ մեր Գիւղէն իսլամացուցին հարս մը, զոր Կասմայէն բերուած էր հոս հարսնութեան, այս առթիւ աւելի մանրամասնութիւններ կրնաք ստանալ Տիվրիկիի առաջնորդարանէն, ասկից զատ ոչինչ չունինք, ո՛չ անցեալին մէջ եւ ո՛չ ալ ներկայիս: Մօռցանք գրելու թէ իսլամացեալին Հայ անունն էր Նեկդար եւ կը գտնուի Տիվրիկ ըէժի մէմուրին¹¹⁴ տունը:

Դպրոցական ծախսերնիս կը հոգանք՝ մաս մը աշակերտներէն, մաս մնալ վերոյգրեալ ազգապատկան կալուածներու բերած հասոյթէն:

3 մայիս 1913 Զիմարա

Թաղական Անդամք

Խաչիկ Գ. Միսաքեան

Մկրտիչ Մարլուեան (Բիձա)

Ատենապետ Քրիստափոր Ն. Թիզանեան

Բարդիկ Մ. Ղարիպեան

Ատենադպիր Սարգիս Բ. Վարդազեան

[կնիք՝ Թաղ. Խորհ. Զիմարայի: Կնիք. 1910]

ւած է 1779-ին եւ կոչուած՝ Ս. Երրորդութիւն: 1912-13-ի ցուցակներուն համաձայն եւս վերանորոգութեան թուականն է 1839-ը: Ըստ վկաներու, եկեղեցին հոյակապ էր ու պայծառ:

¹¹⁰ Բացի Ս. Նիկողայոսի եւ Ս. Պօղոս-Պետրոսի վանքերէ, Զիմարայի մօտ յիշատակուած են հետեւեալ խոնարհած սրբավայրերը՝ Ս. Սարգիս, Ս. Մեղկերիոս, Ս. Հովսիսիմէ, Ս. Վառվառէ, Ս. Յարութիւն, Ս. Գէորգ, Ս. Քառասուն Մանկունք, Ս. Թորոս, Ս. Աստուածամայր, Ս. Աստուածածին, Ս. Յակոբ, Ս. Բարսեղ, Ս. Եղիա, Ս. Միմաս եւն., ընդհանուր առմամբ 36 ուխտատեղի:

¹¹¹ Ծանօթ էր «Բինկեանցի Վարդան Քահանայ» գրչանունով. ծնած էր 24 Փետրուար 1863-ին, Բինկեան: Պոլիս եւ Եւրոպա շրջելէ ետք, 1892-ին կը վերադառնայ ծննդավայր, ուր կը զբաղի ուսուցչութեամբ: Քահանայ կը ձեռնադրուի 1897-ին՝ Պետրոս Եպս. Թահմիզեանէ, Զիմարայի Ս. Երրորդութիւն եկեղեցոյ վրայ, ուր 12 տարի կը ֆահանայագործէ: 1909-ին կը հրաւիրուի Խարբերդ, ուր կը դասաւանդէ Թլկատինցիի դպրոցին մէջ: 1915-ին բանտակից էր Թլկատինցիի եւ Երուսաղիմի: Կ'ըսուի, թէ բանտը իր իսկ ձեռքով հրդեհած է՝ պատճառ դառնալով իր ու բանտակիցներուն նահատակութեան:

¹¹² Դպրոց մը բանալու համար 1879-ի սկիզբը Պոլսոյ մէջ հիմնուած էր Նալեան ընկերութիւնը:

¹¹³ 1902-ի տուեալներով, վարժարանը ունէր 64 աշակերտ եւ երկու ուսուցիչ:

¹¹⁴ Միսախոտի ընկերութեան պաշտօնեայ (թրք.):

Յ. Գ. Մօոցանք էն կարեւորը յիշեցնել թէ յիշեալ եկեղեցապատկան արտերը մեծ խնդիրի տակ ինկած են մեզի մօտաբնակ Կաղնակ թուրք գիւղացիին կողմէ եւ կառավարութիւնը բացարձակ կը քողարկէ արդարութիւնը: Այս արտերու խնդիրէն առաջ յիշեալ Գիւղի ժողովուրդը վառելափայտի համար իր սահմանն անցնելով մեր անտառանոցէն կը ջարդէր: Մենք գնացինք եւ մեր սահմանին մէջ փայտ ջարդողներ բռնելով տարինք Գիւղապետին յանձնեցինք, այսպէսով քանի իրենք յանդգնեցան մենք նոյն քան սաստկացուցինք գործը եւ չ'թողինք որ նոյն շարունակութեան մէջ յառաջանան: Այս անգամ նախորդ Գայմագամն¹¹⁵ ու իտարէին¹¹⁶ ժողովը 40-45 ոսկի ծախսով յիշեալ տեղը բերին, այսինք մեր անտառին վէճի տակ ինկած տեղը: Ստիպեալ մենք ալ մեր վաւերաթղթերը համագիւղացի բանիբուն անձերու հետ ղրկեցինք Գայմագամին հասկցնելու համար թէ, մենք սա վաւերաթղթերովը տէր եղած ենք այս տեղերուս, որոնց մէջ կը յիշուէր 4-500 տարիէ ի վեր այդ տեղերուն մերն ըլլալը: Գայմագամը մեր ներկայացուցիչները անպատուելով եւ վաւերաթղթերն ալ անտես ընելով գրեթէ կը վռնտէ իր ներկայութենէ եւ Կատնուկցոնց ուզած տեղերէն սահման կը կտրէ, եւ մեզի ալ կը պատուիրէ որ բնաւ չ'անցնինք իր կտրած սահմանը, ինչ որ այդ առթիւ որեւիցէ թուղթ բնաւ չ'իկայ տնակցոնց ձեռքը: Գալով եկեղեցապատկան արտերուն, այս տեղերուն 22 տարիէ ի վերէ ո՞ր 25 ղրուշ արքունական տուրք կու տանք, հերկած էինք եւ պիտի ցանէինք, արդի Գայմագամը ճէվատ պէկը հետապնդելու պատրուակաւ մեր գիւղը եկաւ եւ գնաց Կաղնուկ գիւղը, հոն գիշերելով գնաց Բինկա եւ անկէջ սաստիկ պատուէրագիր մը կը ղրկէ մեզի, ըսելով թէ չ'ըլլայ որ արտերը վարէք, կայ տնակցիք այդ արտերը մերն են ըսելով գնացին եւ մեզ բողոքեցին, այժմ մեզ կոչնագիր եկած է կառավարութենէն եւ շատ հաւանական է այս խնդիրն ալ անտառանոցին խնդիրին արժանանայ:

Նոյնը

Քաղաքիս Զիմառա գիւղի Պատ. Թաղ. Խորհրդոյ ստորագրութիւնները եւ կնիքը կը վաւերացնենք:

1913 Մայիս 10
Տիվրիկ

Առաջնորդ. Փոխանորդ Տիվրիկոյ
Սերովբէ Քհչյ. Բուիկեան

[Կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

* * *

[Կիւրեսին¹¹⁷]

1. Գիւղս կը բաղկանայ 97 տունէ եւ 401 բնակիչներէ¹¹⁸. 137 արու 264 էգ:

2. Կաթուղի եւ բողոքական բնակչութիւն չունիմք:

¹¹⁵ Գաւառապետը:

¹¹⁶ Այսինքն՝ վարչութեան:

¹¹⁷ Կիւրեսին, Կուտասին, Գուրասին, Կուրասիս, Կիւրասին, Քիւրասուն անուններով ալ ծանօթ գիւղին այսօրուան անունն է Կիւրեսին: Կը գտնուի Տիվրիկէ 14 ֆմ. հեռաւորութեամբ, դէպի հարաւ-արեւմուտ: Բնակիչները առհասարակ երկրագործ կ'ին:

¹¹⁸ Գեորգեան-Փապունեան գիւղին բնակչութեան թիւը նշած են որպէս 240, իսկ ըստ Թէոդիկի այդ թիւը կը հասնէր 800-ի (120 տուն): «Եղեռնապատում»ի տուեալները ցոյց կու տան 1600 թիւը, իսկ «Տեղանունների բառարան»ի համաձայն բնակչութեան թիւն էր 1650 (200 տուն): 1902-ի տեղեկագրին համաձայն, գիւղի բնակչութիւնը բաղկացած էր այդ 263, կիւն 259:

3. Գիւղիս մէջ 25 տուն թուրք եւ երկու տուն քուրդ, 34 արու եւ 53 էգ թուրք ութը անձ արու եւ էգ¹¹⁹:

4. Պանդուխտներ¹²⁰ ունիմք որոնք են. Պոլիս կը գտնուին 54 արու եւ 13 էգ, Ամերիկա 67 արու եւ երեք էգ, Եգիպտոս 6 արու եւ մէկ էգ, Պուլկարիա երկու արու, Ռուսիա մէկ արու եւ երկու էգ, Սվազ 7 արու եւ վեց էգ եւ մէկ Զօրք:

5. Երկու Ազգ. Անշարժ կալուածք ունիմք որոնք արտ եւ կալ կը կոչուին: Արտին արժէքը 600 ղրշ է, իսկ կալինը 1000 դահեկան է: Արտին երկու ղրշ. տուրք, իսկ կալին չորս դահեկան տուրք, հասոյթնին 60 ղրշ կալը 250 ղրշ արտը:

6. Մէկ եկեղեցի ունիմք, քարաշէն եւ գմբեթաւոր է. վերաշինուած է 1853 թուին եւ կը կոչուի Ս. Կարապետ եկեղեցի¹²¹:

7. Ունիմք երեք մատուռ, որք են Ս. Թորոս, Աստուածամայր եւ Ս. Գէորգ¹²², աւերակ են. Ս. Թորոս ունի յարակից երկու արտաւոր գետին կ'արժէ 50 ոսկի, հոգեւոր պաշտօնեայ չունի:

8. Վարժարաննիս կը կոչուի Հայկազեան¹²³. ուսուցիչը բնիկ տիւրիկցի Արամ էֆ. Կիւղէլեան շրջանաւարտ Խարբերդ Գերմ. Գոլէճէն¹²⁴ վկայականաւ. տարեթոշակ կ'ստանայ 28 ոսկի¹²⁵. Օգնական Ուսուցիչ գիւղէս Պ. Սերովբէ Ֆըթլեան գիւղիս վարժարանէ է, կ'ուսանի եւ կ'ուսուցանէ. տարեկան 1^{1/2} ոսկի կ'ստանայ, ունիմք 45 մանչ աշակերտ: Շէնքը փայտաշէն երկյարկ եկեղեցւոյ անմիջապէս յարակից, 1878 թուին հիմնուած է¹²⁶, պետական արտօնագիր չունի որովհետեւ եկեղեցւոյ հողին վրայ շինուած է:

9. Աղջկանց վարժարան չունիմք երկսեռ են, տղայոց վարժարանին մէջ վարժուհի չկայ. ունիմք 53 աշակերտուհի որ կ'ընէ երկսեռ 98¹²⁷:

10. Գիւղիս քահանան Տ. Յովհաննէս քհնյ. Թաթարեան. Ձեռնադրուած է 1911 Յունիս 16ին ի Կ. Պոլիս, Պալաթ Ս. Հրեշտակապետաց¹²⁸ եկեղեցին, ձեռամբ Տ. Գրիգորիոս Արքեպիսկոպոս Յովհաննէսեանէ¹²⁹, նախկին անունը Բարունակ Թաթարեան, 42 տարեկան¹³⁰:

¹¹⁹ Ըստ Թէոդիկի, կար 20 տուն թուրք:

¹²⁰ Պանդուխտները եղած է գիւղին ապրուստի գլխաւոր միջոցը: Զինուորական խստութիւններու պատճառով պանդուխտներու թիւն այդ թուականներուն կ'անէ:

¹²¹ Գէորգեան-Փապունեանի տուեալներով գիւղին մէջ կային թէ՛ Ս. Երուդդութիւն, թէ՛ Ս. Կարապետ եկեղեցիները: Սեբաստիոյ պատմագիրքը եւս կը նշէ, թէ գիւղի եկեղեցւոյ անունը եղած էր Ս. Երուդդութիւն: Ըստ 1902-ի տեղեկագրին, Ս. Կարապետ եկեղեցին կառուցուած է 1859-ին, հինի տեղոյն վրայ: 1912-1913-ի ցուցակին համաձայն ալ եկեղեցւոյ շինութեան թուականն է 1853-1854-ը:

¹²² Կը յիշուի Ս. Սարգիս մատուռ մը եւս:

¹²³ Դպրոցը կը մատակարարուէր ժողովուրդին, մանաւանդ Ամերիկա պանդխտածներու օժանդակութեամբ:

¹²⁴ Խարբերդի մէջ (Մեզիրէ) գերմանական առաքելութիւնը հիմնուած էր 1895-ին, համիտեան կոտորածներէն ետք, որբացած մանուկներու ու այրիացած կիներու օգնելու նպատակով: Առաքելութիւնը ունեցած է երկու դպրոց՝ Մանկավարժական դպրոց մը (Ուսուցչանոց) եւ Թաղէոսեան աստուածաբանական դպրոցը, ինչպէս նաեւ որբանոցներ, արհեստանոցներ:

¹²⁵ 1914-ին այս գումարը բարձրացած էր 32 ոսկիի:

¹²⁶ Դպրոցը կանխած է փետրուար 1875-ին հիմնուած ընթերցարանը, որու նախաձեռնողն էր տեղւոյն Վարագ-դատեան ընկերութիւնը (1871-1875): Բնիկ եւ պանդուխտ հայեր իրիկունները կը հաւաքուէին եւ կ'աշխատէին:

¹²⁷ «Հողդար»ի մէջ տպագրուած յօդուածի մը համաձայն, 1914-ին երկսեռ աշակերտութեան թիւը 75-80 էր:

¹²⁸ Տարածուած սխալ մըն է, մինչդէռ եկեղեցւոյ բուն անուանումն է Ս. Հրեշտակապետ: Աղօթավայրը իր անունը ստացած է բիզանդական շրջանին Պալաթի դռան վրայ գտնուող Ս. Միքայէլ հրեշտակապետի փանդակէն:

¹²⁹ Եղած է Պարսկաստանի ու Հնդկաստանի թեմի առաջնորդ: 1907-ին զինք կը տեսնենք Պոլիս, ուր Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ ֆարոգիչն է:

¹³⁰ Տէր-հայրը նահատակուած է Մեծ Եղեռնի օրերուն:

11. Վերջին 30 տարուան ընթացքին մէջ մէկ անձ իսլամացած է, որ կը գտնուի Կ. Պոլիս, ողջ է. ակթընճը տայիրէն¹³¹ չէօփճի օնպաշը¹³² է:

12. Դպրոցական ծախսերնիս մաս մը պանդուխտ ուսումնասիրացէ¹³³ կը հոգացուի եւ մաս մըն ալ տեղական թոշակի դրութենէ:

Սեբաստիոյ Առաջնորդարանի 1596 համար եւ 28 մարտ 1913 թիւ հարցարանին վերայ պատասխանեցինք ստուգապէս որուն կը հաստատեմք:

1913 Մայիս 3 թիւ

Թաղ. Խորհուրդ Կիւրեսին գիւղի

Անդամ Սարգիս Իշխանեան

Ատենադպիր Մարգար Մահտեսեան

Ատենապետ Գաբրիէլ Շօթիլեան

Նախագահ Յովհաննէս Քհնյ. Թաթարեան

[Կնիք՝ Թաղ. Խորհուրդ ԿԻՍՆ գիւղի: Կնիք. 19[երկու թուանշան անընթեռնելի]]

Քաղաքիս Կիւրէսին գիւղի Արժ. Տ. Յովհաննէս Քհնյ. Թաթարեանի եւ Պատ. Թաղ. Խորհրդոյ ստորագրութիւնք եւ կնիքը կը հաստատեմ:

1913 Մայիս 8

Տիվրիկ

Առաջ. Փոխանորդ Տիվրիկոյ

Սերովբէ Քհնյ. Բռիկեան

[Կնիք՝ Առաջնորդարան Հայոց Ի Տիվրիկ, 1886]

* * *

[Օտուոն¹³⁴]

1913 Ապրիլ 26 յ'Օտուոն (Տիվրիկի)

1. Գիւղս կը բաղկանայ հարիւր տունէ 700 ժողովուրդ¹³⁵ 400 արու եւ 300 էգ:

2. Գիւղիս մէջ կաթողիկ եւ բողոքական հասարակութիւն չ'կայ:

3. Զունիմք Թուրք, Զէրքէզ եւ Քիւրտ բնակչութիւն:

4. Ունիմք 150 պանդուխտ որմէ յիսունը Ամերիկա մնացեալ Կ. Պոլիս Պուլկարիա եւ Եգիպտոս:

5. Ազգ. կալուածք չունիմք բացի արօտատեղիէ մը ուր կենդանիներ կ'արածին ար-

¹³¹ Պոլսոյ Բերայի ու Ղալաթիոյ թաղամասերու քաղաքապետարանը:

¹³² Աստիճանաւոր աղբահաւաք:

¹³³ Հաւանաբար նկատի ունի 1909-ին հիմնադրուած Ուսումնասիրաց ընկերութիւնը:

¹³⁴ Ներկայիս անունն է Քայապուրուն: Անցեալին ծանօթ եղած է նաեւ Աստուածատուր անունով: Տիվրիկէն 15 փմ. հեռավորութեան վրայ է, դէպի հարաւ-արեւմուտ:

¹³⁵ Գէորգեան-Փապունեան գիւղի բնակչութեան թիւը նշած են իբր 215, Թէոդիկ՝ 610 (102 տուն, վերապրող՝ 40), Գաբրիէլեան՝ 500 (50 տուն), «Տեղանունների բառարան»՝ 250 (50 տուն): 1902-ի տուեալներով գիւղը ունէր 325 այր եւ 280 կին բնակիչ: Անոնց գլխաւոր զբաղումը երկրագործութիւնն էր:

ժէքն է 170 ոսկի, կառավարական տուրքը 68 ղրշ:

6. Մէկ եկեղեցի ունիմք քարաշէն առաստաղը փայտ, շինուած է 1833ին եւ կը կոչուի Ս. Թովմաս Առաքեալ¹³⁶:

7. Գեղին մէջ եւ շրջակայքը կը գտնուին աւերակ մատուռներ, անունները՝ Փայլուն վանք¹³⁷ ուր երեք եկեղեցիի շէնքի փլածոյներ կան, Ս. Նիկողոս, Պօղոս Պետրոս, Ս. Թորոս, Թաթէոս Առաքեալ, Մայր Աստուածածին, Ս. Վասիլիոս, Ս. Մինաս, որոնք կիսավեր վիճակի մէջ են կալուածներ չունին, հոգեւոր պաշտօնեայ չկայ:

8. Գիւղիս մանչերու վարժարանին անունն է Թովմայեան վարժարան այս տարի ուսուցիչ չունեցանք, անցեալ տարիներու ուսուցչի տարեթոշակ կու տայինք 27 ոսկի, 80 ութսուն երկսեռ աշակերտներ ունիմք¹³⁸, դպրոցի շէնքը փայտաշէն եւ երկյարկ, շինուած է 1872 եւ վերանորոգուած 1907, պետական արտօնագիր չունի:

9. Աղջկանց յատուկ վարժարան չունիմք երկսեռ կ'ուսանին եւ 15 հատ են

10. Բնիկ Տիվրիկէ՝ Տ. Արիստակէս Քահանայ¹³⁹, ձեռնադրուած է Ատանա Ս. Աստուածածնայ մայր եկեղեցւոյ¹⁴⁰ մէջ Վեհ. Տ. Սահակ կաթողիկոսէն¹⁴¹ 1910 մարտ 21 թուն, նախկին անունն է Խաչատուր Սուքիասեան եւ տարիքը 38:

11. Յարդ պատահած չէ իսլամացում.

12. Դպրոցնիս կը կառավարուի մաս մը եկեղեցւոյ դրամով եւ մասամբ պանդուխտ Ուսումնասիրացի օժանդակութեամբ

Սեբաստիոյ Առաջնորդարանէ ղրկուած 1596 համար եւ 23 Մարտ 1913 թիւ հարցարանին ստուգիւ պատասխանելով կը հաստատեմք:

Թաղական Խորհուրդ Օտուռ գիւղի

Անդամ Գրիգոր Մուրատեան [կնքած է՝ Գ. Յ. Մուրատեան 1910]

Անդամ Բարուկ Զոբուռեան

Անդամ Զատիկ [անընթեռնելի]

Ատենադպիր Մկրտիչ Մնտիկեան [կնքած է՝ Մկրտչ 1910]

Ատենապետ Յարութիւն Զոփուռեան [կնքած է՝ անընթեռնելի]

Նախագահ Արիստակէս Քհնյ. Սուքիասեան

[կնիք՝ Հոգաբարձութիւն Թովմասյեան վարժարանի Օտուռ Գիւղի – Տիվրիկ - 1909]

¹³⁶ Ըստ 1912-1913-ի ցուցակին, եկեղեցւոյ կառուցման թուականն է 1842-1843:

¹³⁷ Յայտնի՝ Փայլեվանք անունով ալ:

¹³⁸ Աշակերտութեան թիւը 1900-ին եւ 1901-ին եղած է 60, իսկ 1902-ին՝ 50:

¹³⁹ Նահատակ Մեծ Եղեռնի:

¹⁴⁰ Ատանայի մայր եկեղեցին կառուցուած էր 1846-ին, նարտարապետութեամբ Յակոբ Խալֆայի եւ ժողովրդային հանգանակութեամբ: Ատանայցիներ զայն «Վերի եկեղեցի» կ'անուանէին: Մինչեւ 1922-ը ծառայած է տեղւոյն հայութեան: Այդ թուականէն ետք շարժանկարի սրահի վերածուած է, որպէս Ատանայի ամենաբնակարանը: Ի հիմանէ քանդակարտութեան եւ տեղը շինուած է Թուրքիոյ կեդրոնական դրամատան շրջանային մասնակցութեամբ:

¹⁴¹ Մնած է Խարբերդ, Եղեգի գիւղ, 1849-ին: Ուսումը ստացած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի ժառանգատեալ վարժարանին մէջ: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1877-ին, ձեռամբ Եսայի պատրիարքի: 1885-ին ընտրուած է Ս. Աթոռի լուսարարապետ, իսկ 1903-ին՝ Կիլիկիոյ կաթողիկոս: Մեծ Եղեռնէն ետք աթոռը կը դադանայ աստանդական: 1930-ին կայք կը հաստատէ Ամբիլիաս, Պէյրութ: Կը վախճանի 1939-ին, յԱմբիլիաս:

Քաղաքիս Օտուռ գիւղի Արժ. Տ. Արիստակէս Քհնյ. Սուքիասեանի եւ Պատ. Թաղ. Խորհրդոյ ստորագրութիւնները եւ գիւղի վարժարանի հոգաբարձութեան կնիքը կը հաստատեմ:

1913 ապրիլ 28
Տիվրիկ

Առաջ. Փոխանորդ Տիվրիկոյ
Սերովբէ Քհնյ. Բռիկեան

[Կնիք՝ Առաջնորդարան Հայոց ի Տիվրիկ, 1886]

